

891.99

U-27

2

891.99 /
~~U-27~~

6 NOV 2011

ԼԵՒՈՆ ՄԵՆՈՒԼԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐ

Պ Օ Է Մ Ա Ն Ե Ր



Դ ի ը ը Կ ը ը ը ը



891.99
5-27

Տպարան „ՇԻՐԱԿ“ Ալեքսանդրապոլ
1 9 0 7

891.99

5-27

պ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐ

Պ Օ Է Մ Ա Ն Ե Ր

253

Գ Ր Ր Ր Ե Ր Կ Ր Ր Ր Ր



Տպարան „ՇԻՐԱԿ“ Ալեքսանդրապոլ

1 9 0 7

24 JUN 2013

41934

Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

Այս ժողովածուի մէջ գիտնուած ոտանաւոր-
ների մի մասը տպւած է եղել զանազան պար-
բերական հրատարակութիւնների մէջ՝ «Աղբրուր»,
«Հա՛ղէս գրական եւ պատմական», «Մուրճ» եւ
«Արշարկյս». միւս մասը կազմած է վերջին տա-
րիների ոտանաւորներից եւ տպւում է տառջին
անգամ:

ՀԵՂԻՆԱԿ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Չ Ո Ղ Ե Ր

Դեռ ամուր է իմ սիրուն հաւակը,
Նա դեռ գընում է առաջ և առաջ.
Եւ արդէն մօտ է իմ նըպատակը,—
Ահա տեսնում եմ ափերը կանաչ:

Մըռայլ խաւարըն անցնում է ահա,
Եւ վերջանում է ահուկի գիշեր—
Ափերի բարձր լեռների վըրայ
Ես նըշմարում եմ առաջին չոփեր:

Երկինքը պարզեց. դադարեց մըրրիկ.
Իր վիհը դոցեց անդունդը մըթին.
Հըպարտ գըլուխը խոնարհեց ալիք,—
Ես մօտենում եմ հաւահանդըստին:



Յ Ո Յ Ս

Ո՛հ, դեռ տակաւին յոյսըս չէ մարած,
Որ կը գայ ժամը վերածնութեան,
Երբ որ մեր հոգին՝ նոր թեւեր առած՝
Կը վարթնի քընից իր խոր թըմբութեան,
Եւ մի նոր թափով կը թըռչի վերեւ,
Մըտորումներ ծանօթ աշխարհը,
Ուր այնպէս պայծառ փայլում էր արեւ
Եւ ուր հընչում էր կեանքի քընարը:
Օ՛, շուտով արի, նոր գարնան լանքեր,
Նոր օր տենչալի վերածնութեան.
Թող կըրկին հընչեն բնդհաւած երգեր
Մոռացւած սիրոյ և ճըշմարտութեան:



Յ Ա Ն Կ Ա Լ Ի Ե Ր Պ

Ես չեմ կամենում անհոգ երգերի մեղեդիներով
Օրօրեկ հոգու քո անդորրութիւն
Եւ լըսելիքըդ շոյիլ զըրախտի պատմութիւններով.
Երջանիկ զըրախտ չը կայ աշխարհում:

Բայց ես կուզէի, որ իմ երգերին լըսիկ ունկընդիբ՝
Հոգիդ վերանար իմ հոգու նըման,
Եւ ցած կըրքերից իսպառ ազատւած՝ դու սըլանայիր
Դէպի աշխարհը կատարելութեան:

Կուզէի երգերս հընչէին այնպէս, ինչպէս զանգակներ,
Որ զօղանջում են արեւածագին
Եւ վարթեցնելով կոչում են մարդկանց գէպի տաճարներ՝
Ազօթելու վեհ սիրոյ քարոզչին:



ԱՆԻԻ ԱԻԵՐԱԿՆԵՐԻ ՎՐԱՅ

(է լ ե գ ի ա)

Օ՛, անցած փառքի վերջին բեկորներ...
Նորից դարթեցնում էք դուք իմ հոգում
Անդարձ օրերի անցին պատկերներ
Եւ խորին ցաւով իմ սիրտը լրցնում:

Ամեն մի բուռն հոգ և ամեն մի քար
Վըկայ է այստեղ դարաւոր փառքին,
Այստեղ բոլորը սուրբ է ինձ համար,
Ինչ որ ընկած է աչքիս առաջին,—

Եւ այս տաճարներ, բարեպաշտութեան
Եւ ճոխ արւեստի անխօս վրկաներ,
Եւ այս արքունիք թաղաւորական,
Եւ այս կիսաւեր, խարխուլ պարիսպներ...

Այն եռուն կիանքի ուրախ աղմուկից
Այսօր մեզ համար էլ ոչինչ չը մնաց.
Բըլուրների տակ ծածկւած աչքերից՝
Ամեն բան թաղւած, ամեն բան լրւած:

Բայց լուռ չէ միայն հէզ Ախուրեանը
Եւ զիշեր-ցերեկ նա ողբ է ասում.


Նա զեռ յիշում է իր հին օրրանը
Եւ յուսահատւած ափերին դարնում,

Ջարնւում ափերին և համբոյր տալով
Կոծով վազում է հարազատ վայրից,
Նըման խեղճ այն մօր, որ հեկեկալով
Դառնում է միակ որդու շիրիմից:



ԲՆՈՒԹԵԱՆ ԳՐԱԳՈՒՄ

Եթէ յագնեցիր կեանքի կըռւի մէջ,
 Եւ հոգիդ կարօտ է լուս հանգրստեան,
 Զըզէր առօրեայ հոգսերդ անվերջ
 Եւ թըռիւր դէպի դիրկը բընութեան:
 Որպիսի՜ հեշտանք-խաղաղ անկիւնում
 Թափառել շրքեղ ծառուղիներում,
 Շընչել անտառի կենսարար օդը
 Եւ դադար առնել ախորժ ըստերում,
 Ուր թաւշի նըման քընքոյշ է խտաւ.
 Կամ խոր ձորի մէջ, գետակի ափին,
 Ուր կորագըլուխ նիրհում է ուռին,
 Քարերի վըրայ նըստած երագել
 Եւ ջըրի ձայնին ունկընդիր լինել:
 Ի՜նչ երանութիւն—լեռների գըլխից
 Հիանալ շրքեղ տեսարաններով
 Եւ հեռու երկրի տառապանքներից՝
 Ուրախ և ազատ իրգել անխորոշ,
 Մոռանալ տանջող վըշտերըն անթիւ
 Եւ բիւր հոգսերից մի պահ ազատւած՝
 Մի վայրկեան ըզզալ իրան վեհ արծիւ՝
 Կորովի թափով ամպերին հասած:



Ս Ե Ր Ո Ւ Ն Գ Ն Ե Ր

Եւ այսպէս ահա անցնում է ձեր դար,
 Զեր դարը քընի և անշարժութեան,
 Օ, խըղճուկ սերունդ, դու, սերունդ թըշնոտ,
 Արդէն դիմում ես դէպի քո վախճան:

Գալիս են նոր կեանք, նոր բարք, նոր օրեր,
 Եւ ահա մօտ է ձեր անփառ անկում.
 Պիտի ջախջախեն ձեր սուր ու սուսեր
 Նոր սերընդի դէմ մըղած գոռ մարտում:

Եւ յաղթահարւած տիտանների պէս,
 Պարտութեան դըրոշմ ձեր ճակատներին՝
 Դուք պիտի թողնէք գործի ասպարէզ
 Եւ տեղի տաք նաւ և թարմ սերընդին:

Եւ այդ սերունդը՝ առողջ և ուժեղ
 Շինարար ոգով, ստեղծաշործութեամբ՝
 Ահա գալիս է բզկիդ և անշեղ
 Յաղթական երգի նըւագածութեամբ:

Նա գալիս է ձեր աւերի վըրան
 Կառուցանելու հոյակապ տաճար,
 Տաճար ճըշմարիտ լուսաւորութեան—
 Կեցցէ նոր սերունդ և նոր գաղափար:

Ս Ի Ր Ա Վ Է Պ

Թէ ինչպէս էինք մենք իրար սիրում,
Դա յայտնի է մեզ, մէկ էլ Աստուծուն:
Ծեր սէրը չունէր գլորեթէ սահման.
Պաշտում էինք մենք՝ նա ինձ, ես նրբան:

Բայց չէր վիճակւած, տարաբախտաբար,
Միասին գընալ մեր կեանքի ուղին.
Նա մի ամուսին գըտաւ իր համար,
Եւ ես էլ գըտայ ինձ համար մի կին:

Գարունը գընաց և նորից եկաւ,
Եւ այսպէս երկար տարիներ անցան.
Սակաւ առ սակաւ մեր սէրը հանգաւ,
Եւ մենք մոռացանք՝ նա ինձ, ես նրբան:

Բայց ահա մի օր ամառանոցում,
Երբ մանկիկներին առաջը գցած՝
Նա ման էր գալիս ծառուղիներում՝
Իր ամուսնու հետ թեանցուկ արած,

Մենք իրար տեսանք, իրար նայեցինք,
(Նա գեղեցիկ էր առաջւայ նրման).
Անցած օրերը նորից յիշեցինք—
Եւ կարօտեցինք՝ նա ինձ, ես նրբան:

Մ Ի Ր Ա Փ

(Էլեգիա)

Այն գեղեցիկ մի պատկեր էր, որ տեսար,
Քանի պայծառ դեռ փայլում էր արեգակ.
Անաղատում հրաշալի էր այն աշխարհ,
Որ կախած էր բարձր օդում՝ երկնի տակ:

Հըսկայի պէս կանգնած էին վերևում
Յաղարթագեղ կանաչ ծառեր գըրախտի,
Եւ դու զմայլւած էիր աչքիս երևում,
Հիասթափւած, մըտամոլոր պատանի:

Դու կարծեցիր, թէ վերջացաւ քո ուղին,
Եւ մօտիկ է երանաւէտ այն ուխտ,
Ուր հանգըստեամբ պիտ արբենայ քո հոգին,
Վայելչութիւն ճաշակելով լիանառ:

Բայց մայր մըտաւ թէ չէ լոյսը արևի,
Եւ փոխարէն տիրեց թէ չէ լուռ խաւար,
Աւաղ, հանգաւ գեղեցկութիւն միւրաժի,
Ըսքանչելի և խարուսիկ այն աշխարհ:



Ը Ն Ա Պ Ա Տ Ո Ւ Մ

(Էլեգիա)

Անապատում գընում էի ճանապարհ՝
Հալածական, մեն ու մենակ, անընկեր—
Ձը կար մէկը, որ իմ ճամբին միանար,
Ձը կար մէկը, որ ինձ սիրա տար, ըսփովէր:

Վաստակարեկ, ճամբի կիսին չը հասած,
Ես վայր ընկայ, ծանրը բեռը իմ ուսին—
Ձը կար մէկը, որ մօտենար սիրազգաց,
Կիսէր բեռն ու գնայինք միասին:

Օրը տօթ էր. ծարաւ էի. ջուր չը կար.
Կըրակում էր ներսըս անհուն ծարաւից—
Ձը կար մէկը, որ լըքածիս մօտենար,
Զովացընէր սիրտըս այրող կըրակից:

Անապատում ընկած էի ուժասպառ.
Շունչըս արդէն թուլանում էր և հատնում—
Ձը կար արեւ, տարածում էր սև խաւար,
Աչքիս լոյսը պըղտորում էր և մարում:

Արդէն մօտ են, աւանդ, վերջին բոպէներ.
Մահւան պաղուկ կըրտինք տըւեց ճակատիս—

«Մընաք բարեաւ, իմ երազներ և յոյսեր,
Մընաք բարեաւ, ծըրագիրներ իմ կեանքիս»:

Բայց իմ մահւան ճըգնաժամին դու ինձ մօտ
Հրեշտակի պէս երևացիր, իմ անգին,
Եւ կենսարար ջըրով լեցուն մի անօթ
Մօտեցըրիք իմ չորացած շըրթունքին:

Ու ականջիս հընչեց քաղցր մի բարբառ՝
Ախորժալուր, եղեմական երգի պէս.
«Վեր կաց, անա ջուր եմ բերել քեզ համար.
Խըմիր, հոգեակ, որ ոյժ առնես և ապրես»:

«Արիացիր. մենակ չես դու այսուհետ.
Ես մըտերիմ քո ընկերն եմ այս ժամից.
Ուր որ գընաս, ես քոնըն եմ ու քեզ հետ,
Քո վըշտերի ու նեղութեան մասնակից»:

Այսպէս սառած իմ արիւնը ջերմացաւ,
Ու բարախեց դադրած սիրտըս վերըստին.
Ճակտիս մահւան սառ քըրտինքը չորացաւ—
Ես վեր կացայ, ողջոյն տըւի նոր կեանքին:

«Դ՞եւ ես արդեօք, հոգուս հատոր, պաշտելիս,
Որի կարօտն ինձ մաշում էր անդադար.

«Հասէք օգնութեան, ընկեր-ծառաներ»,—
Ահով ու գողով գոչում է արքան.
Սակայն նըրա շուրջ հեծում են հողմեր,
Եւ նըրա ձայնին չը կայ պատասխան:

Գոչում է դարձեալ, գոռում վերըստին,
Սառ արցունքներ են աչքերին փայլում.
Նըժոյգը դարձեալ դուփում է գետին,
Եւ գամփրոնները յուսահատ հաչում:

Բայց դուր, օգնութեան մի ձայն չէ հասնում.
Միայն արձագանքն է խուլ, հեռաւոր
Նըրա գոչիւնը ձորի խորքերում
Կըրկնում տըխրագին, ինչպէս սըգաւոր:

Եւ Արտաւազըր ահաբեկ այն ժամ
Լըսում է իր հօր անէծք դառնագին,
Որով անիծեց մեծափառ արքան
Իր չարանախանձ, մոլի գաւաղին.

«Երբ որ դու հեծած նըժոյգ հըրեղէն,
Արտաւազը, Մասիս որսալու գընաս,
Թող քաջքերն առնեն քեզ վիհը ձըգեն,
Որ լոյս-արեւի դու կարօտ մընաս»:

Եւ սըրտատըրոփ Արտաւազը արքան
Լըսում է յանկարծ վայրենի ձայներ.
Նայում է—այնտեղ, հեռից խրոնեւրամ
Վազում են ահա լեւան ոգիներ:

Եւ նա շուտափոյթ ուժգին հարւածեց
Երկու ծընկներով ըմբոստ նըժոյգին—
Նըժոյգը թըռաւ, ժայռիցը ոստնեց,
Եւ ողջ կլանեց անդունդը մըթին:

Մըրբիկը դարձեալ մըռունչ է հանում,
Եւ մէզ ու դուման պատում են ձորեր.
Բորանը խաղում, սուլում ու հեծում,
Չորս կողմը դիզում ձիւնի տալափներ...

*
*
*

«Այսօր-էգուց» ասելով
Թարմ հասակըգ չորացրիր,
Հազար իղձեր, հազար յոյսեր
Դու անօգուտ թաղեցիր:

Ձարթիր, ընկեր, հերիք քընես,
Թըմըութիւնըդ թօթափիր.
Տէս—քո առջև լայն ասպարէզ—
Թեւաւորէր և թըռիր:

ԱՂՔԱՏՐ և ԱՄԵՆԱՅԸՐԻ ԿԻՆՔ

Ձըքաւորի դըրան շեմքին
Կանդնած էր մի մուրացկան՝
Վիզը ճըկած, ցուպը ձեռին,
Գունատ, ինչպէս ուրաւկան:

Արտաւազին աղերսանքով
Ողորմութիւն էր հայցում
Եւ Քրիստոսի սուրբ անունով
Տիրոջ օջախըն օրհնում:

Կարծես յանկարծ փայլեց արև
Կամ մի աստղիկ երկնային,
Երբ երեաց նըրա առջև
Այն խըրճըթի տիրուհին:

Հագած էր նա պարզ ու ձերմակ,
Առանց արդ ու զարդերի.
Բայց երեսը լոյս էր խտակ,
Բօյր՝ նըման չինարի:

Պարկեշտ, համեստ և ամօթխած,
Աչքերն յառած յատակին,

Մի պահ լըռեց, յետոյ ասաց
Աստածառաք իր հիւրին.

«Բայց ի՞նչ տամ քեզ, խեղճ ու թըշառ,
Եղբայր, վըկայ է Աստուած,
Տանըս նոյն իսկ դեղի համար
Ոչ փարա կայ և ոչ հաց»:

— «Գէթ մի համբոյր», — անհամարձակ
Խօսեց նա, — «անխ, քուրբիկ ջան,
Թո՛ղ գէթ մի օր, հացի տեղակ,
Մարդու սիրով կըշտանամ»:

Եւ ո՛հ զարմանք — գըթոտ սըրտով
Նա իր այսը գէժ արաւ,
Եւ աղքատը համբուրելով
Այդ օր սիրով յագեցաւ:



Ս Ա Ս Ո Ւ Ն

Սե սե ամպեր կուտակ կուտակ
Սասնոյ լեռներ բլուրներն,
Որոտացին փայլակ, կաճակ,
Սասնուն, օ վայ քո գրլիխին:

Սասուն ընկաւ իրարանցում,
Հուր ու կրակ տեղացին՝
Արեան գետեր են յորդանում,—
Սասնուն, օ վայ քո գրլիխին:

Սասուն բոլրակեց կրրակ ու բոց,
Խաղաղ գիւղեր վառւեցին,
Ամենայն տեղ չիւան ու կոց,—
Սասնուն, օ վայ քո գրլիխին:

Առեանգում, արան-թարան,
Ծեր ու մանուկ սրի տակին,
Քիւրդ ու տաճիկ դարձան գաղան,—
Սասնուն, օ վայ քո գրլիխին:

Կլորիճ Սասուն «վրէժ» գոռաց,
Նըշան գրբեց ոսոխին,
Բայց թընդանօթ սարից թընդաց,
Սասնուն, օ վայ քո գրլիխին:

Թըշառ Սասուն դարձաւ աւեր,
Շատ քըչերը մընացին.
Ընկան հազար ու մէկ քաջեր,—
Սասնուն, օ վայ քո գրլիխին:

Լըսեց Եւրոպ և զարհուրեց,
Դատի կանչեց տաճիկին.
Բայց յանցանքը չը պատըժեց.
Սասուն, օ վայ քո գրլիխին:



ԼԵՌՆԱՅԻՆ ՎՏԱԿ

Ըստխտակ, փայլուն սարի կատարից
Ձիւնը հալւում է արևի տակին,
Եւ մի հրաշախօս վրտակ այնտեղից
Ծընունդ առնելով թափւում է ուժգին:

Ընթանում է նա քաղցրիկ շրջիւնով
Կամ ոստոտելով ժայռից դէպի ցած,
Հընչում միալար, մեղմիկ կարկաջով՝
Մանկական ամբիժ խընդութեամբ լրջւած:

Նայիր—վազում է, պարում, թըռչկոտում,
Արևին քընքոյշ համրոյնի տալով,
Եւ իր կուսական կուրծքը զարդարւում
Եօթնեակ գեղեցիկ շրքեղ գոյներով:

Գընում է... բայց ուր:—Ներքե, ձորի մէջ,
Ինչպէս մի զազան, փըրփուռը բերնին,
Էռում է մի գետ, գոռում է անվերջ,
Պըղտոր ալիքներ զարնում ալիերին:

Սիրուն վրտակը գիւմում է այնտեղ,
Երգելով երգեր՝ իր եղեմական:
Ձորում վազում է գետակըն ահեղ,
Իսկ նա, միամիտ, անհոգ, անգուման,

Դեռ ցած է իջնում... Նըրա առաջին
Ահա մի ալիք բերանը բացեց
Եւ մատաղահաս մաքուր էակին
Իր սրովայնում խկոյն կըլանեց:

Ու կոհակների մթին անգունդից
Լըսւում է ահա մի խուլ դըղըրդոց.
«Ինչո՞ւ դու, թըշւառ, յրատակ երկընքից
Իջար և ընկար այս սև, ցեխոտ ծոց»:

Բայց սիրուն վրտակն էլ ձայն չը հանեց.
Նըրա հետքերը ըննալինջ եղան.
Իսկ գետըն ուռած ուժգին մըռնչեց,
Ժայռեր փրշրելով դիմեց հեռաստան:



Ա Ղ Ո Ւ Ն

Անանային քամիները փռչեցին,
Ծառ ու ծաղկունք տերևները թափեցին.
Երկինքը մռայլ, գիշեր-ցերեկ ամպամած.
Սար ու ձորեր մէկ մառախուղ է պատած:

Ամայացան անդաստաններ, այգիներ.
Թըռչունների ուրախ երգը դադարեց.
Խոպանացան աղմուկալից ճամբաներ,
Եւ սայլերի անցուղարձը ընդհատուեց:

Յողնած եղներն հանգրստացան գոմերում,
Օջախի շուրջ գեղջուկները խմբուեցին
Աշխատանքի պրտուղներն են վայելում
Ուրախ-զըւարթ, մինչև գարուն ապահով:



ԱՆՎԵՐՋ ԳԻՋԵՐ

Անվերջ գիշեր... կէս աշխարհը խոր քնած,
Դուրսը խոնաւ, թանձր խաւար է պատած.
Քամին սուլում է վայրենի իր երգեր...
Ա՛խ, ինչ տըխուր, ինչ երկար է այս գիշեր:

Ի՞նչ կը լինի, իմ ազգ, քո խեղճ ապագան.
Արդեօք դարձեալ ըստրեկութիւն շարունակ,
Թէ պիտ ծագէ և քեզ վըրայ փըրկութեան
Եւ նոր կեանքի մի լուսաւոր արեգակ:

Արիւնաքամ, ինչպէս լըքած վիրաւոր,
Աղիողորմ հեծում է նա, հառաչում,—
Բայց իր որդիք անօգնական և անզօր—
Ոչ մի տեղից օգնութիւն չէ մօտենում:

Այսպէս անթիւ մըտքեր են ինձ պաշարել.
Հանգիստ չը կայ, ինձ տանջում են չարաչար .
Ա՛խ, երանի կարենայի ես քննել,
Գէթ մի վայրկեան առնել հանգիստ ու գաղար:

Կամ գոնէ դու, ով տըշալոյս գեղանի,
Որին այսպէս ըսպասում եմ անհամբեր,
Շուտ վառէիր արեւըրում ծիրանի
Եւ վանէիր տխուր, անվերջ այս գիշեր:

ԱՆԴՐԻԱԳՈՐԾԸ

Անդրիագործը զերի էր ընկած
Խըժդուժ ցեղի մօտ հեռաւոր երկրում,
Ուր խաւար բանտում ձեռ-ոտը կապած՝
Անյոյս և անլոյս հալւում էր մաշւում:

Ու չէր հեռանում աչքի առաջից
Չըքնաղ Հելլադան, հայրենի աշխարհ,
Քաղւում էր հողին չարատանջ մըտքից.
«Աւաղ, փըրկութիւն չը կայ ինձ համար»:

Ամբոխը մի օր յայանում է նըրան.
— «Մեր կուռքըն ընկաւ: Նըրա փոխարէն
Շինիր մեզ համար նոր կուռք, նոր արձան—
Եւ դու այնուհետ ազատ ես արդէն»:

Տըխուր ճակատը փայլեց վառ յուսով:
Անդրիագործըն ընկաւ սար ու քար
Արձանի նիւթը գըտնելու մըտքով.—
Եւ ահա... յանկարծ մի ընտիր մարմար:

Փըղտկրի նըման ճերմակ էր, անբիծ.
Մի ճեղք և մի գիծ չը կար բընաւին.

Եւ այն հաղւագիւտ մարմարինից
Ճարտար վարպետը դըրօշեց անդրին,

Մի ըսքանչելի, հոյակապ արձան,
Որ մեծ ֆիդեասի Զեւսին էր նըման.
Նըրա պէս կարող, հըպարտ, դանգրահեր,
Վեհապանձ ճակատ, շանթածիզ աչքեր:

Մարմարինը կարծես կենդանի
Կանգնած նայում էր... Արձանի վըրան
Ազնիւ հանճարը պարզ, ակընյայտի
Դըրել էր դըրոշմ ստեղծագործութեան:

Բայց բիրտ ամբոխը անդրին տապալեց.
— «Այդ չէ՝ մեր Աստուած», միաձայն գոչեց.
«Մեր Աստուած բընաւ նըման չէ մարդուն:
Նա՛ պէտք է սարսափ ազդէ մեր հոգուն»:

«Աւաղ, կորաւ իմ բոլոր չարչարանք.
Մարեց և յոյսըն իմ ազատութեան.
Դարձեալ խաւար բանտ, դարձեալ կուռ կապանք
Եւ հառաչանքներ անվերջ գերութեան»...

Սակայն չը հասած իր բանտի դըրան,
Յանկարծ երջանիկ նոր միտք յըղացաւ—

Նոր կուռքը շինել իսկ հընի նըման.
Եւ լուրըն իսկոյն ամբօխին հասաւ:

— «Բայց կուռքը լինի դաժան ու խոշոր», —
Պայման էր դըրած անդրիագործին:
Եւ նա սև ժայռից ջարդեց մի կըտոր,
Ձեռնամուխ եղաւ իր աշխատանքին:

Քանի մի հարւած ժէռ-քարի վըրայ,
Եւ կուռքըն արդէն պատրաստ է ահա:
Մի ճիւղով էր այն, այլանդակ, տըզեղ,
Ոչ մարդ ոչ գազան, այլ հըրէշ ահեղ:

Ամբօխը տեսաւ նորակերտ անդրին,
Որ յար նըման էր վաղեմի կուռքին,
Ու գոչեց ուրախ ծընկներ խոնարհած.
— «Ահա մեր կուռքը, ահա մեր աստուած»:



Ե Ղ Ե Ի Ի Ն

Օ՛, մի նայիր այդպէս տըխուր մագերիս,
Որ օրէցօր ճերմակում են, ճերմակում.
Նայիր ներսըս, նայիր սիրտըս ու հոգիս —
Այնտեղ, հոգեանկ, դեռ նոր գարուն է բացւում:

Տեսն'լ ես դու ցուրտ հիւսիսում մեծացած
Անտառի մէջ ըսքանչելի եղին.
Ամբողջ ձըմեռ ճերմակ ձիւնով է ծածկւած,
Բայց ձիւնի տակ նա կանաչ է տակաւին:



Ն ՈՐ Ս ՈՒՆ Մ

Ես ձեզ ասում եմ. այս ողջ քաղաքը,
Որ լուռ տանում է իր նըշաւակը,
Թո՛ղ ճահիճ՝ դառնայ ապականութեան,
Ինչպէս նոր Սողոմ կամ Արշակաւան,
Եւ մարդիկ մոռցած ազնիւը, բարին՝
Անձնատուր լինեն անարգ կըրքերին,
Թո՛ղ վաճառ հանեն ամօթ, խիղճ և գութ,
Գործիք ընտրելով սուտ, դաւ, կոշտութեամբ.
Ցերեկը գանձեր գիւղելով տըքներն
Եւ գիշերներըն անքուն անցըներն
Անառակութեան շրջալստ անկողնում,
Արբեցութեան մէջ, զեղիւ օրգիայում,—
Ես ձեզ ասում եմ—իմ մէջ կայ հաւատ
Դէպի մարդկային առաքինութիւն
Եւ այսուհանդերձ նա կը մնայ հաստատ,
Ինչպէս մարմարեայ անյողողող մի սիւն:

Ի՞նչ ամբոխ է սա:—Մի հէզ բազմութիւն,
Որ իր խղճալի անգիտութեան մէջ
Կարծեց, թէ գլտաւ բախտաւորութիւն
Այնտեղ, որտեղից գլծովք է նայում,
Եւ գեռունների երամի նըման
Ժողովւել է գարշ այն ճահճի վըրան,
Որի շիթերը խառըն են թոյնով—
Բիւր թըշառների արիւն-արցունքով:

Բայց կը գայ մի օր—ազա՛ն խուժանի
Ընչասիրութեան ծաբաւը կ'անցնի,
Եւ մինչև կսկորդ տըղմի մէջ խըրւած,
Անղօր և դալուկ և հիասթափւած՝
Մաքուր տենչերի կարօտը կը զգայ
Եւ դարձի կը գայ:

Իր բազուկները պիտի տարածէ
Ճըշմարտութիւնից փըրկութիւն հայցէ...
Եւ այն օրանից կը հնչէ զանգը
Մոլորեաճների ապաշխարութեան,
Եւ կը նորոգւի, կը մաքրւի կեանքը
Այս խեղճ բազմութեան:



Ի Մ Զ Ա Ի Ա Կ Ի Ն

Աղէտալի այն օրերում
Աշխարհ եկար, իմ անգին,
Երբ ծանր վիշտ էր մեր սրբոտում
Եւ սե թախիծ մեր դէմքին:

Բայց դու, դարնան վարդի նըման,
Ազատ աճում ես, ծաղկում
Եւ, անգիտակ մեր տըխրութեան,
Թըրվըռում ես և ժըպում:

Ժըպտան, որդեակ... կը դայ մի օր,
Եւ դու, ազգիդ կարեկից,
Կը մօտենաս, կ'ասես քո հօր.
«Հայրիկ, պատմիր անցեալից»:

Այն ժամանակ ես ծերացած՝
(Եթէ մեռած չը լինեմ)
Հին ցաւերով նորից լըցւած՝
Քեզ շատ բաներ կը պատմեմ:

Ես կը պատմեմ քո հէզ ազգի
Խաչելութեան օրերը
Եւ անօրէն քուրդ ու տաճկի
Գաղանային դործերը,

Անմեղներ թափած արիւն,
Խոշտանգումներ և լլկանք.
Եւրոպայի գոռում-գոչիւն,
Հայի յոյսեր և պատրանք:

Այն ժամանակ էլ չի փալի
Վառ ժըպիտը քո դէմքին,
Ազգիդ վիճակն աղէտալի
Կը մորմոքէ քո հոգին:

Բայց քանի դեռ, վարդի նըման,
Դու ծաղկում ես փըթթելով,
Ժըպտան, որդեակ իմ աննըման,
Մօրըդ գըրկում խաղալով:



Թ Ա Խ Ի Ծ

Կայ մի էակ խորհրդաւոր և զաղանի,
Որ մի բազէ չէ բաժանուում ինձանից.
Ուր որ գընամ, նա էլ այնտեղ կը լինի.
Կարծես քէ իմ բարեկամն է սրբաւից:

Մըտնում եմ ես խիտ անտառը, որ սակաւ
Յոգնած միտքըս անդորրութեամբ կազդուրեմ,
Անն կարծես գետնի տակից նա բաւ
Եւ իմ առջև կանգնած է նա գէմուդէմ:

Իջեում եմ ձոր, ուր վըտակըն է վազում,
Ուռիների արմատները քերելով,
Նա էլ այնտեղ կանգնած ինձ մօտ գետափում
Նայում է ինձ Սագայէի ժըպիտով:

Բարձրանում եմ լեռան գագաթ փառահեղ
Ըզմայլելու գեղեցկութեամբ բընութեան,—
Տեսնում եմ—նա նոյնպէս կանգնած է այնտեղ
Եւ շեշտակի աչքըն յառած իմ վըրան:

Ընտանիքում, իմ հարազատ շըրջանում,
Խընջոյթի մէջ, գինու թասի առաջին,—
Ես շարունակ նըրա պատկերն եմ տեսնում,
Որ չարութեամբ թափանցում է իմ հոգին:

Գիշերըն էլ հանգիստ չունիմ նըրանից.
Քանի՜ անգամ քընիս քաղցր բոպէին
Սարսափահար վեր եմ ցատկէլ իմ տեղից
Եւ տեսել եմ—նա է աչքիս առաջին:

«Ո՞վ ես, ասն, ի՞նչ ես ուզում ինձանից»
Ես վերջապէս հարցընում եմ մի անգամ:
—Իմ անունըս է կեանք մաշող սև թախիծ.
Ընկերըդ եմ, քո մըտերիմ բարեկամ:



ԳՈՂԹԱՆ ԵՐԳԻՉՆԵՐԻՆ

Շիրիմներից ըսթափեցէք խըմբովին,
Նըւիրական Դողթան օրհնեալ երգիչներ,
Եւ մատներով լեզու տըւէք լարերին—
Աղբիւրի պէս թո՛ղ կարկաշեն ձեր տաղեր:
Կենդանացած ձեր երգերով կորովի՝
Հին օրերի փառք ու պարծանք, մեծութիւն,
Մեր առաջն թո՛ղ ժողովէ վաղեմի
Վեհ, քաջագործ գիւցազների բազմութիւն:

Դըրատեցէք նըրանց անուն սըրբազան,
Հայրենիքի անձնանըւէր նըրանց սէր,—
Ձեր երգերի հընչիւնները գիւթական
Մաքուր բոցով թող բորբոքեն մեր սըրտեր:
Անցան դարեր—կախարդական ձեր քընար
Գէթ մի անգամ էլ չը հընչեց ոգելից,
Եւ անցնում է ձեր համբաւը դարեդար,
Մենք զըրկած ենք, անջատւած ենք ձեզանից:

Ուր բամբըռան երբեմն ձայն էր թընդում,
Եւ որոտում քաղցրահընչիւն ձեր նըւագ,
Այժմ աշնտեղ բիրտ մետաղըն է հընչում,
Աշնտեղ մեռած է ձեր օրհնեալ յիշատակ,
Եւ անըզայ ու ապառաժ սըրտերում
Վաղուց ի վեր հանդած է և սուրբ կըրօակ:

Ձեր անցեալիցն այն փառաւոր, թանկագին
Մեզ ի՞նչ մընաց—միայն հընչին մի ըստեր...
Ո՛հ, զըրկեցէք մեզ մի սերունդ նորածին,
Ու մեր մաշած հոգին երգով նորոգէր,
Կամ ինքները ըսթափեցէք խըմբովին,
Նըւիրական Դողթան օրհնեալ երգիչներ:

ՈՂՋՈՅՆ ՄՈՒՍԸՅԻՍ

Ողջոյն մուտայիս... Դու կըրկին եկար
Եւ այցելում ես քո բարեկամին.
Յըրբի ուրեմն, իմ կեանքի խաւար,
Դիցունուս պայծառ յոյսի առաջին:
Նորոգւած կեանքի նոր շունչ եմ ըզգում,
Գարնան նոր հովեր և նոր թարմութիւն.
Կըրկին զարթնում են իմ հոգու խորքում
Վառվըռուն յոյսեր և ուրախութիւն:
Արի, սիրելիս, մօտեցի՛ր, անդին,
Էլ մի հեռանար, միշտ կայ գու ինձ մօտ.
Արի գըլուխը թեքի՛ր իմ կըրծքին
Գուրգուրամ, պաղնեմ,—առնեմ իմ կարօտ:



ՄՈՒՍԸՆ և ՊՈՅԷՏԸ

Մուսան տասց. «Օ՛, քո հըպարտ ու կամակոր այդ հո-
գով
Կը վաստակես դու միայն սև և ոխակալ թըշնամանք
Եւ դու ինքդ քո թափնիքը քակակու ես քո ձեռքով,
Եւ քո կեանքը լինելու է միայն անվերջ տառապանք»:

Պոյէտն տասց. «Օ՛, ես ինքս իմ ոսոխիս առաջին
Պոռմէթիսի հըպարտութեամբ իմ տանջանքը կը ծաղ-
րեմ.
Ո՛վ իմ մուսա, թըշնամանքը սոսկալի չէ բընաւին.
Մըտերիմ եմ իմ կոչմանը,—եւ իմ խաչը կը տանեմ:

Ծ Ո Վ

Սիրուն է ծովը մեզմ հղանակին,
Երբ ջինջ ու կապոյտ փրուած անսահման՝
Ծրփում է պայծառ արևի տակին
Շողշողուն, հըսկայ հայելու նըման:

Բայց փըչեց մըրրիկ—յուզլում է և ծով,
Ալիքների մէջ շըփոթ և պայքար.
Գընում գալիս են և մըռընչելով
Հըսկաների պէս զարնում են իրար:

ԱՅԺՄ ԻՆՉ ԱՆԵՆՔ

(à la Պ ա տ կ ա ն Ե ա ն)

Այժմ՝ ի՞նչ անենք, որ փըրկենք հային:
«Հայի արին ալ վոթեցաւ» արդէն.
Դաժան թըշնամուն իրանց զո՛հ բերին
Հազար կըտրիճներ՝ մէկի փոխարէն:

Մեր չէն գիւղօրայք—քարուքանդ եղած,
Մեր քոյր ու եղբայր—դարձել են մոխիր.
Ով սուր ու հըրից կենդանի մընաց.
Յուպը ձեռն առաւ՝ գընաց տարագիր:

Մեզ ոչինչ չ'օգնեց՝ ոչ հուր և ոչ գէնք,
Ոչ բիւր քաջերի նահատակութիւն,
Դէ, եղբարք հայեր, այժմ ի՞նչ անենք,
Որ մեր հայրենիք գըտնէ փըրկութիւն:

Եկէք, եղբայրներ, լուսոյ ջահ վառենք
Եւ պայծառ լուսով լըցնենք մեր աշխարհ—
Գուցէ այսպիսով փըրկութիւն գըտնենք
Թըշնառ և անտէր մեր ազգի համար:



ԳԵՂԵՅԿԱՊԸՋՏ ԲԱՐԵԿԱՄԻՍ

Դու—անթառամ պոյէղիայի սիրահար,
 Քաղցրը է քեզ գեղարեւտի ներշնչանք.
 Աւելի մեծ վայելք չը կայ քեզ համար,
 Քան հանճարի հոգու վրսեմ զառանցանք:

Ստեղծագործող մըտքի դիւթիչ զօրութեամբ
 Ոգևորւած՝ բարձրանում ես դէպի վեր,
 Դէպի երկինք աստեղալից և անամպ,
 Ուր ծընւում են ազնւագոյն խորհուրդներ:

Հոգիդ անյաղ միշտ քաշում է խոր կարօտ
 Զով ձորերի, անտառների թարմութեան,
 Ուր փրուած են աչքի առաջ իրար մօտ
 Հաղար ու մէկ ըսքանչելիք բընութեան:

Թէ նազելի մի կոյս կանցնի քս մօտով,
 Թէ կը լսես քաղցր ձայնի մեղեդին,
 Սրբոյ խորքից ախ ես քաշում կարօտով,
 Որ քեզ համար չէ երկրային այն փերին:

Ազմրկալից բնկերական շրջանում
 Խօսք-զրոյցի, վէճի համար միշտ մեռած՝
 Փորձանքի մէջ, կեանքի զբժար վայրկեանում,
 Բարեկամիդ համար կեանքըդ ես զբրած:

ԻՄ ԹՂՆԱՄԻՆԵՐԻՆ

Երբ ես տեսնում եմ թըշնամիներին
 Բոլոր նկնգամիտ խարդաւանանքը,
 Ո՛հ, ի՞նչ գայրոյթով լըցւում է հոգիս,
 Ի՛նչպէս ուզում եմ նրբանց լուսանքը
 Նոյնութեամբ իրանց վերագարձընել
 Եւ գայլերի հետ գայլի պէս կրուել...

Բայց հէնց որ իմ մէջ, հոգուս խորքումը,
 Լըսում եմ ձայնը բանականութեան,
 Զըսպւում է գրքչիս մաղձոտ շարժումը,
 Եւ հանդչում հուրըն աշնիւ բարկութեան:
 Նա ասում է ինձ. «Մի բռնակիր, պոյէտ
 Այդ փառք որոնող ըստահակներից.
 Դու հաշիւ չունիս և ոչ մէկի հետ—
 Բարձրացիր հագով նրբանց վերայից»:

«Զուր մի պըղտորիր քո խաղաղ արիւն,
 Ներքին ոյժերդ ունայն մի վառնիր.
 Արատաւորել քո բարի անուն
 Չեն կարող, որքան լինեն ջանադիր:
 Դեռ կատարելիք ունիս շատ գործեր.
 Գործիր հընազանդ քո վրսեմ կոչման,
 Թող իրար անցնեն քո թըշնամիներ—
 Քոնըն է վերջը փայլուն ապագան»:

Ս Ե Ի Ա Ն

(Լեզենդ)

Աշխարհից հեռու կապուտակ ծովում
Դարերից ի վեր հանգչում է Սեան,
Ուր ժէռոտ լերան ըստորոտներում
Ընկած է մի վանք և մի այգեստան,
Եւ աւելի վեր, սարի գագաթին,
Մի այլ մենաստան՝ կիսաւեր և հին:

Անցնում են դարեր իրար ետևից,
Եւ սուրբ հայրերի ջերմ աղօթքներով,
Հեռու աշխարհի ունայն աղմուկից,
Ծաղկում է Սեան անդորր, ապահով:
Սիրելի է այդ մենաւոր անկիւն.
Այնտեղ տիրում է սուրբ խաղաղութիւն:

Մի անգամ կըղզուն մօտեցաւ նաւակ,
Եւ ափըն իջան երկու ճամբորդներ:
Դեռ չէին հասել սուրբ հօր յարկի տակ,
Ընդ առաջ ելաւ ալեւոր մի ծեր:
«Աստուած օգնական», ասացին երկսով
Եւ աջըն առան խոնարհ ողջունով:

Ահա վանահօր առաջնորդութեամբ
Շըրջում են կըղզում, բզբռնում այգում,
Մընում են տաճար ջերմեռանդութեամբ
Եւ աղօթում են և ծունրը իջնում:
Երբ ամեն մէկն իր աղօթքն արաւ,
Հայր սուրբը նըրանց իր խուցը տարաւ:

Պատեց հիւրերին իր աղ ու հացով,
Կերան, խըմեցին և, երբ յագեցան,
Երկուսըն էլ գոհ և ուրախ սըրտով
Հըրածեշտ տըւին, խըցիցը կ'ան:
Բայց ճամբից առաջ, աղօթքի համար,
Մի անգամ ևս մընում են տաճար...

Բայց ինչ պատահեց մի ակընթարթում...
Ծովը հանդարտ էր, մի ալիք չը կար,
Ծառերի վըրայ տերև չէր շարժում,
Եւ արեգակը փայլում էր պայծառ:
Ինչո՞ւ ամեն ինչ տակ ու վրայ եղաւ,
Խառնեց բընութիւն և խօսս դարձաւ:

Սեաթոյր ամպեր երկինք ծածկեցին,
Բըռնեցին երես լոյս — արեգական,
Բարձրացան հողմեր և շառաչեցին,
Ծառերը մինչև գետին կըռացան:
Դողդոջուն ձայնով դօղանջեց զանգակ,
Եւ ծովը յուզեց մինչև խոր յատակ:

Ափումը կոճղից նաւակը կապած,
Ալիքների հետ տարուրերւելով,
Մերթ վեր է ցատկում, մերթ բնկնում է ցած,
Մերթ, նահանջելով ուժգին յորձանքով,
Տըքնում է ամուր պարանը կրարէլ
Եւ ազատ ծուլում խաղալ ու կայտոել:

Եւ ճամբորդները մեղապարտ հոգով
Նաւակի առաջ եղերքին կանգնած՝
Նայում են անթարթ դէպի յուզւած ծով,
Ուր մըրմըռում է ալիքը փրփրած.
Եւ չեն յանդըգնում նաւակը մըտնել,—
«Բայց պէտք է փախչել, անյապաղ փախչել»...

Հայր սուրբը եկաւ, ասաց. «Սիրելիք,
Եթէ ձեր սիրտը մաքուր է, արդար,
Ձեր խիղճը հանգիստ և մեղքեր չունիք,
Մաղթում եմ ես ձեզ բարի ճանապարհ:
Ուրախ և անհոգ նըստեցէք նաւակ.
Առանց փորձանքի կը հասնէք ցամաք:

«Բայց վա՛յ է, եթէ ձեր հոգու խորքում
Ծանրացել է մեղք, որ և է յանցանք,
Ձեզ համար է և այս ալեկոծում
Եւ այս կատաղի հողմի շառաչանք.
Ու չեն դադարի սըրանք էլ երբէք,
Մինչև չը զղջար և չ'ապաշխարէք:

Հեծծում է քամին աւելի ուժգին,
Եւ լեռնանում են ծովի ալիքներ,
Կարծես կամենում էին ողջ կըղզին
Սուզել ջրի տակ կամ թըռցնել եթեր.
Իսկ զանգը դարձեալ ողբում է, ողբում
Եւ տրիտեր ձայներ չորս կողմը սըփռում...

Փաղանին մերկացաւ: Չարագործները
Իրանց յանցանքը խոստովանեցին,
Տաճարից կորզած սուրբ անօթները
Բոլորը սուրբ հօր առաջը դրին,
Եւ ամօթահար ծունկ խոնարհելով
Այսպէս խօսեցին դողդոջուն ձայնով.

«Յանցաւոր ենք մենք, ինչպէս աւաղակ.
Մեղաւորներին թողութիւն արա՛.
Քո աղ ու հացը տըւինք ոտի տակ,
Մեծ մեղք բարձեցինք մեր հոգու վըրայ:
Եւ ահա Աստուծ երկուսին պատժեց.
Մեր ճանապարհը մեր առաջ փակեց»:

—Սըխալը, որդիք, յատուկ է մարդուն,—
Սուրբ հօր շըրթունքից հընչում է բարբառ.
Բայց վա՛յ անըզամ, անօրէն հոգուն,
Որ իր մեղքի մէջ մընում է յամառ:
Բայց զօրաւոր է խոստովանութիւն.
Նա հանգցընում է Աստըծոյ ցասում:

Հաղիւ աւարանց, նոյն իսկ վայրկեանին
Պատառւած ամպից արեւ փայլեց,
Խաղաղեց ծովը, դադարեց քամին,
Զանգակի տըխուր հընչիւնը լըռեց:
Այնուհետ սուրբ հօր հըրածեշտ տալով
Ուղեօրները հեռացան շուտով:



1. ԻԲԻԿՈՍԻ ԿՌՈՒՆԿՆԵՐԸ

(Die Kraniche des Ibykus)

Դէպի Իսթմեան սուրբ հանդէսը մեծհամբաւ,
Ուր ժողովուրդ էին անթիւ հելլէններ՝
Տեսնելու մարտն երգիչների և արշաւ,
Ընթանում էր Իրիկոսը երկնասէր:
Ապոլլոնը պարգևատրած էր նրան
Անուշ բերան, քաղցրիկ երգի մի քանքար,
Եւ ձեռն առած փոքրիկ, թեթեւ գաւազան՝
Ողևորւած գընում էր իր ճանապարհ:

Ահա արդէն հեռաստանում երեաց
Սարալանջին Ակրոկորինթ վերամբարձ,
Եւ սրբատարութի ու երկիւղած նա մըտաւ
Պոսիդոնի մայրի անտառ խըտաթաւ:
Ամեն տեղ լուռ, ոչ մի շըշուկ, ոչ մի ձայն.
Կըռունկների երամներն են միայն
Շարան-շարան, շըլթայի պէս միացած,
Զըւում հեռու՝ գէպի գարուն նորարաց:

«Ո՛վ մըտերիմ դուք երամներ օդապար,
Որ ուղեկից էիք ինձ հետ միասին,
Երնէկ բարի նըշան լինէք ինձ համար.
Իմ բաժինը յար և նըման է ձերին:

Ես էլ ձեզ պէս՝ ելած հեռու վայրերից՝
Մի հիւրընկալ ապաստան եմ որոնում.
Թող մեզ պաշտպան լինի Զեար երկնքից,
Որ պանդըխտին աղէտից դերձ է պահում:

Եւ նա ուրախ ուղղում է իր քայլերը
Առաջ, դէպի անտառային խորքերը:
Յանկարծ ահա ճամբին երկու մարդասպան
Մի նեղ շաւղում կանգնում են դէմ-յանդիման:
Նա պատրաստ էր ընդդիմանալ թըշնամուն,
Բայց թուլացաւ խեղճի ձեռքը և ընկաւ.
Վարժ քընարի միայն լարեր լարելուն՝
Իր աղեղը լարել անգոր գըտնեցաւ:

Նա կոչում է ասուածներին և մարդկանց,—
Աղաչանքին չը կայ լսող և մի անձ.
Յուսակըտուր կանչում է նա, հառաչում,—
Նըրա ձայնը արձագանքն է կըրկնում:
«Ուրեմն այստեղ լըքւած պիտի ես մեռնեմ,
Հայրենիքից հեռու, օտար աշխարհում,
Եւ չար ձեռքով անթաղ պիտի կորընչեմ՝
Վըրէժ չ'առած և քէն ու ոխ իմ սըրտում»:

Եւ նա ընկաւ՝ մի ծանրը վերք իր կըրծքում:
Յանկարծ աղմուկ կըռռնկներ թևերից,
Նա լըսում է—էլ աչքերը չեն տեսնում—

Օղբ դողաց սարսափելի կըռինչից:
«Ո՛վ կըռռնկներ, որ թըռչում էք օդապար,
Երբ ոչ մի ձայն էլ չը յիշէ իմ անուն,
Եղէք դուք իմ մահւան վըկայ անաչառ»:
Ասաց, մարեց աչքի լոյսը—մըտաւ քուն:

Մերկացըբած մարմինը շուտ գըտնըեց.
Թէև անչափ յօշոտւած էր վէրքերով,
Բայց անյապաղ երգչին դէմքից ձանաչեց
Կորինթացի բարեկամը տեսնելով:
«Այսպէս պիտի տեսնէի քեզ, սիրելի.
Իմ իղձըս էր—սոճեայ շըքեղ պըսակով
Զարդարել քո վեհ ձակատը պանծալի՝
Լուսաւորւած փառքի պայծառ շողերով»:

Գոյժըն հասաւ ահա բոլոր հիւրերին՝
Պոսիդոնի տօնին ի մի ժողովւած.
Ողջ Յունաստան ողբաց ողբով դառնագին,
Եւ ամեն ոք նոյն վըշտով էր համակւած:
Եւ մոլեգնած ամբոխն ահա խըռնըեց
Պրիտանների առաջ, վըրէժ է կանչում,
«Վըրէժ երգչի հոգու համար»,—նա գոչեց.
«Զարագործի արիւնըն ենք պահանջում»:

Բայց ուր փընտրել նըրա հեռքը և լո՛ւնչպէս
Ովկեանոսում ալեկոծւած բաղմութեան՝

Ամեն կողմից թափւած շքեղ այս հանդէս՝
Գլանել ներս սե երեսը մոլեկան:
Աւազանկ էր, որ շընչում է անարգել,
Թէ թըշնամի՝ դըրդւած մի կոյր նախանձից—
Միայն Հելիոսն այդ կարող է վըկայել,
Որ աշխարհը լուսաւորում է բարձրից:

Գուցէ նոյն իսկ այս բոպէին համարձակ
Շըրջում է յոյն բազմութեան մէջ անվեհեր,
Եւ, մինչ նըրան փընտրում է վրէժ դըժընդակ,
Նա քաղում է իր յանցանքի պըտուղներ,
Կամ տաճարի գուցէ շեմքում նա կանգնած՝
Աստուծներին պիղծ բերանով անարգում
Եւ ամբոխի ալիքի հետ խառնըւած՝
Խըբոխաւալով դէպի թատրոն է դիմում,

Ուր շարեշար իրար վըրայ կուտակւած՝
(Նեցուկները հազիւ հազ են դիմանում)
Հեռու և մօտ երկիրներից ժողովւած
Յոյն ազգերը խըռնըւում են, ըսպասում.
Որպէս ծովի ալիքներ, խուլ աղմուկով
Վըխտում էին, և շարքերը անհամար
Խըտանալով և անընդհատ աճելով
Բարձըրանում մինչ երկընքի ջինջ կամար:

Ո՞վ կը համըէ այս ցեղերը բազմազան՝
Այստեղ սիրով հիւընկալւած միաբան.

Ամեն տեղից եկել են՝ ճշիւ Աթէնքից,
Աւիդայից և Փոկիսից, Սպարտայից,
Եւ ափերիցն Ասիայի հեռաւոր,
Եւ էգէյեան կըղզիներից փառաւոր—
Եւ լըսում են ուշի ուշով և լըռին
Ահեղ պարի սարսափելի մեղեդին:

Խըստահայեաց, լուրջ, վագնմի կանոնով,
Դանդաղաքայլ և չափածոյ ձեմելով
Բեմի խորքից ենում է նա և անցնում
Եւ թատրոնի շուրջ մի պըտոյտ կատարում:
Դա հոգեղէն կանանց բայլ չէ բընաւին,
Մահկանացու գերդաստանում չեն ծընւած.
Մարմինները հըսկայ հասակ ունէին,
Որ մարդկային հասակից էր գերազանց:

Մինչև ազգերը ծածկւած են սե քօղերով
Եւ շարժում են իրանց վըտիտ ձեռքերում
Կերոնները՝ զոդոջ, աղօտ բոցերով.
Չը կայ արիւն չոր ու ցամաք այտերում:
Եւ գըլխների մազեր չը կան փարելի,
Ճակատներին չեն ծածանւում գանգուրներ,
Եյլ միմիայն սե օձեր են անուիլ՝
Հանած իրանց չար, թուխաւոր լեղուներ:

Շըրջան կապած՝ որոտաձայն երգեցին.
Թընդաց թատրոն այն համերգիցըն ուժպին,

Որ թափանցում է խոր սիրտը և խոցում,
 Ոճրագործի շուրջ հանդուցյունը ուրում:
 Որոտում է էրինների երգն ահեղ,
 Թրոցնում է միտք, աչքի լոյսը խաւարում,
 Որոտում է, չորացնում է ուղեղ,
 Եւ քընարը համբանում է և լրուում:

«Երանի՜ նրան, ով ազատ է մեղքերից
 Եւ մանկական հոգի ունի մի ամբիծ—
 Մենք նըրանից վըրէժ չունինք տակաւին.
 Թող նա ազատ գընայ կեանքի իր ուղին:
 Բայց վնայ նըրան, ով որ գործեց վայրաբար
 Ծանրը յանցանք ըսպանութեան զազրելի.
 Նըրան պիտի մենք հալածենք անզաղար,
 Մենք, ծընունդներս զըժոխային խաւարի:

Եւ կարծում է, թէ կ'ազատի սխալութեամբ.
 Բայց մենք ունինք զօրեղ թևեր, կը հասնենք
 Եւ ցանցի մէջ ուռքերը պինդ փաթթելով
 Բոլոր ուժով նըրան վայր կը տապալենք:
 Նըրան անվերջ պիտի քըչենք մենք ալսպէս.
 Ոչ մի զըղջում նըրա հետ չի հաշտեցնի.
 Պիտ հալածենք նըրան մինչև Այիդէս,
 Այնտեղ էլ մենք նըրան ազատ չեն թողնի»:

Լըռեց պարը, ահեղ երգը զաղարեց.
 Եւ թառորոնում անգործութիւն տարածւեց.

Գերեզմանի, մահաւան ճընշող լրուութիւն,—
 Կարձես ներկայ լինէր Աստծոյ գոյութիւն:
 Հանդիսօրէն և վաղեմի կանոնով
 Թատրոնի շուրջ մի պըտոյտ է կատարում
 Եւ համբաքայլ ու հափածոյ ճեմելով
 Անհետանում դարձեալ բեմի խորքերում:

Ճըշմարտի և պատրանքի մէջ երերուն՝
 Ամեն մի սիրտ կասկածում է և զողում
 Ու ենթարկւում այն սոսկալի զօրութեան,
 Որ գտակով, իբրև արթուն պահապան,
 Անմեկնելի, անհասնելի, անքըննին,
 Մեր վիճակի սև կըծիկըն է հիւսում,
 Արեգական լոյսից ծածկւած բընաւին,
 Տեսանելի միայն սըրտի խորքերում:

Յանկարձ ահա աստիճանից լրուում է.
 Թէ ինչպէս մէկ հանդիսական գոչում է.
 «Նայիր, նայիր, Տիմոթէոս, վերնում
 Իրիկոսի կռունկներն են սլանում»:
 Երկնակամարն յանկարձ մըթնեց, սեպաւ.
 Եւ ամբոխը նայեց վերև ու տեսաւ—
 Երկընքովը կըռունկները երամով
 Շարան-շարան չըւում էին կըռնչով:

«Ի՞նչ. Իրիկոս»:
 Եւ թանկագին այս անուն
 Ամեն մէկի սըրտին նոր վիշտ է բերում:

Ինչպէս ծովի մըրըրկայոյզ ալիքներ,
Բերնից բերան անցնում էին այս խօսքեր.
«Իբրիկսը, որին ամենքն են ողբում.
Որին սպանեց չարագործը անտառում.
Ի՞նչ իմաստ կայ այս խօսքի մէջ, ի՞նչ նըշան
Ունի չըւող կըռուենիների այս երամ»:

Եւ դեռ կըրկնում երեքկնում են հարցերը,
Եւ կայծակի ասեռ փայլից սրտերը
Նախազգացին. «Այստեղ է նա, մարդասպան!
Էրինների անա արդար դատաստան»:
Խոնարհ երգչի սուրը վըրէժը լուծեցաւ.
Չարագործը մատնեց իրան շըփոթւած.
«Բըռնե՛լ նրան, ումնից խօսքը դուրս թըռաւ,
Եւ այն մէկին, ում այն խօսքըն էր ասւած»:

Բայց ով այն խօսքն յանկարծ թըռցրեց բերանից,
Կուգէր կըրծընում գաղտնի պահել ամենրից,
Սակայն իզո՛ւր. դէմքով գունատ, ալլալլւած՝
Իսկոյն մատնեց իր ոճիըը կատարած:
Պրիտանների առաջ տարան երկուսին,
Բեմը դարձաւ մի իսկական դատարան.
Չարագործը խոստովանեց ամենքին,
Գործակցի հետ ըմպեց բաժակ դառնութեան:

II. Լ Ո Ւ Ղ Ո Ր Դ

(Der Taucher)

«Ո՞վ ձեզանից, ասպետ կամ թէ մանկլաւիկ,
Կը խիզախէ այս խոր անդունդը նետել.
Չըզում եմ ես ոսկի գաւաթ գեղեցիկ.
Անա նըրան լափեց սե վիհըն անել:
Ով գաւաթը ետ կը բերէ վերըստին,
Իրան մընայ թնդ այն ընծան թանկագին»:

Ասաց արքան և վերամբարձ մի ժայռից,
Որի հըսկայ թեք և անեղ գագաթը
Դէպի անհուն ծովն էր նայում բարձունքից,
Խարիբդայի մէջ նա ձըգեց գաւաթը:
«Ո՞ր քաջն արդեօք, հարցընում եմ ես դարձնալ,
Կը խիզախէ այս անդունդը սըլանալ»:

Մանկլաւիկներ և ասպետներ պապանձւած՝
Համարձակում չէին նոյն իսկ ձայն հանել.
Նայում էին դէպի ծովը մոլեգնած—
Չէր յօժարում ոչ ոք գաւաթը բերել:
Երբորդ անգամ արքան կըրկնեց անհամբեր,
«Մի՞թէ չը կայ և ոչ մէկը, որ նետէր»:

Բոլորեքեան դեռ լուռ էին: Բայց շուտով
Մի մանկլաւիկ անա կայտառ և խոնարհ,

Ընկերական իր շքեղանից զատուելով,
Իր վերաբերուն վերցրեց, հանեց իր քամար:
Բոլորեքեան ապշած՝ թէ մարդ և թէ կին՝
Նայում էին դէպի շքեղ աղտոտանին:

Նա մօտենում է թեք ժայռին և կանգնում՝
Աչքերն յառած դէպի անդունդը խորին.
Վինը ջրերն իր որովայնն էր առնում.
Բայց Խաբիրդան արտավիժում էր կրրկին:
Որոտալով, ինչպէս հեռում փոթորիկ,
Թափում էր վին փրփրադէզ գոռ ալիք:

Մըռնչում է, եռում, սուլում անդադար,
Կարծես թէ հուր և ջուր իրար են խառնում.
Ալիքները զարնւում են վայրաբար,
Եւ փրփուռը դէպի երկինք է թռչում:
Գոռ յորձանքը պըտտում է եռալով,
Կարծես ծովից պիտի ծընւէր մի նոր ծով:

Վայրի ոյժը երբ խաղաղեց վերջապէս,
Ահա յանկարծ փրփուռի մէջ ըսպիտակ
Բացեց սև ճեղք՝ լայն, վիշապի վըհի պէս,
Մնդընդախոր, ինչպէս զըծոխք անյատակ,
Եւ ալիքը զարնւելով փըշրւում
Ու պըտտող ձագարի մէջն էր թափում:

Քանի որ դեռ ալիքը չէր բարձրանում,
Պատանեակը իրան Տիրոջն յանձնեց

Եւ—անի ճիշ միայն լըսեց ամբոխում,
Մի անուրի յորձանք նըբան կըլանեց:
Խորհրդաւոր վինն յանկարծ գոցեցաւ,
Քաջ լուղորդը անդունդի մէջ չըքացաւ:

Արեւոծումն արդէն առել է դադար.
Միայն խորքում խուլ մըրմուռ է շարունակ.
Ու սոսկումով ամենքն ասում են իրար.
«Մընսն բարեաւ, ով քաջասիրտ պատանեակ»:
Եւ մըրմուռը կամաց կամաց լըռում է.
Ամեն մի սիրտ անուղղով սպասում է:

«Ձրդիր նոյն իսկ քո այդ թագը փառաւոր,
Ասելով, թէ ով ետ բերէ վերըստին,
Նա կը կըրէ և կը լինի թագաւոր,
Ձի հրապուրի ինձ այդ ընծան թանկագին:
Ինչ որ անդունդն իր խորքումն է թագցրել,
Ոչ մի հոգի այստեղ կարող չէ պատմել»:

«Որքան նաւեր, յափըշտակած ալիքից,
Կըլանել է սև անդունդն անուրի
Եւ փըշրւած վերագարծրել յատակից
Լող բեկորներ տախտակների, կայմերի»:
Ծովը նորից մըռնչել է ըսկըսում,
Կարծես հեռից փոթորիկ է մօտենում:

Մըռնչում է, եռում, սուլում անդադար,
կարծես թէ հուր և ջուր իրար են խառնում:
Ալիքները զարնւում են վայրաբար,
եւ փրփուռը դէպի երկինք է թռչում:
Որտաւրով, ինչպէս հեռում փոթորիկ,
Թափւում էր վիհ փրփրոտագէզ գոռ ալիք:

Սակայն ահա յանկարծ մըռայլ յորձանքում
Ինչ որ էակ փայլեց ճերմակ ու պայծառ,
Ուս և ծոծրակ են ալիքից երևում,
Ալիքի հետ կըրւում է նա քաջարար:
Այս նա է, նա, ոսկի գաւաթն իր ձեռքին,
Որ խընդագէմ մօտենում է եզերքին:

Նա ծանրագին երկար շընչում էր, հեռւմ
Եւ լոյս-աշխարհ ողջունում էր սըրտագին:
Ամենքն ուրախ իրար դիմում են, ասում:
«Նա ողջ է դեռ, ըսքանչելի պատանին:
Գերեզմանից, ծովի խորունկ յատակից,
Իր կենդանի հոգին փրկեց անդունդից»:

Գալիս է նա. ուրախ խումբը բոլորեց,
Եւ նա բնկաւ թագաւորի ոտքերը
Ու ծընկաչոք նըրան գաւաթըն յանձնեց:
Արքան ասաց իր փրկեցեալ դըստերը
Մի լի գաւաթ անուշ գինի տալ նըրան,
Եւ պատանին դիմեց դէպի իր արքան:

«Իմ արքային երկար օրեր և արեւ.
Ուրախ է, ով ապրում է լոյս-աշխարհում.
Սակայն խաւար և սասկալի է ներքեւ,
Եւ մարդ երբէք թող չը փորձէ Ասարժուն,
Թող չը ձըգտէ երբէք գըրանել այն գաղտնին,
Որ խաւարով ծածկել է Տէրն երկնային»:

«Ինձ կայծակի թափով մի ոյժ տարաւ ցած.
Այնտեղ յանկարծ ժայռի ճեղքից ժայթքելով
Իմ դէմ ելաւ մի մեծ հոսանք կատաղած,
Յափըշտակեց ինձ վիթխարի իր ուժով
Եւ, ինչպէս հող, ինձ ըսկըսեց պըտըտել
Յորձանքի մէջ—չը կարեցայ դիմագրել»:

«Այն ժամանակ, իմ ծայրայեղ վիճակում,
Աստած, որին ջերմ հաւատով դիմեցի,
Ինձ ցոյց տըւեց մի ժայռ՝ ցըցւած յատակում.
Ես նըրանից պինդ բըռնելով փրկեցի:
Բուստի ճիւղից այնտեղ գաւաթն էր կախած,
Անդունդի մէջ կորընչելուց ազատւած»:

«Այնտեղ, ինձնից ներքեւ, մութ էր ամեն բան.
Ծիրանագոյն մըթնաշաղ էր. ինձնից վեր
Ամեն ինչ լուռ, կարծես քընած յաւիտեան.
Բայց սոսկալով տեսնում էին իմ աչքեր,
Թէ ինչպէս այն սարսափելի զըթոխքում
Հագար ու մէկ հըրէշներ են գալարում»:

«Վըխտում էին սև խաւարում անմըռունչ
Փաթթւած իրար, որպէս կըծիկ գարշիլի,
Փըշոտ ներքէս, խարախածուկ սըրադունչ,
Հըրէշաւոր ծովային ուռ, և վայրի
Ատամներով ըսպառնում էր իմ կեանքին
Շընածուկը, ծովի ահեղ բորենին»:

«Այնտեղ կախւած՝ իմ մահն աչքիս առաջին,
Այնքան հեռու էի մարդկանց հայեացքից.
Հըրէշների մէջ, ես մարդկային իմ սիրով
Սարսափելի մենակ էի ըզգում ինձ:
Շատ խոր էի ես մարդկային ձայնի տակ,
Անապատի ձիւաղների մէջ մենակ»:

«Ես սոսկացի. ըզգում եմ, որ իմ դիմաց
Սողում է մի հարիւրոտնեայ այլանդակ
Եւ կամենում է ինձ բըռնել. սարսափած
Ես այն բուստից թողի ձեռքս, և արագ
Յորձանք տալով զօրեղ վըտակն ինձ գըրկեց.
Դա փըկութիւնըս էր—նա ինձ վեր նետեց»:

Խիստ հաճեցաւ արքան, ասաց կըտրիճին.
«Այս գաւաթը գառնում է քո սեփական.
Բայց քոնըն է և այս շըքեղ մատանին,
Որ կըրում է անգին մի ալ պատուական,
Եթէ միայն սուգւես նորից, լուր բերես,
Ինչ որ ծովի խոր յատակում կը տեսնես»:

Երբ այս լըսեց դուտորը, սըրտով վըշտակիւր
Դիմեց իր հօր աղերսանքով և խօսեց.
«Թող, հայր, օ լո՛ւս, այժմ նըրան խընայիր.
Ո՞վ կարող է անել, ինչ որ նա արեց:
Եթէ վըճուել ես կատարել քո փափագ,
Թող մի ասպեա գընայ, ոչ այս պատանեակ»:

Արքան առաւ գաւաթը և վերեկց
Նետեց իսկոյն դէպի անդունդը խորին:
«Եթէ գաւաթը կը բերես ինձ նորից,
Դու կը լինես ընտիր ասպետն իմ անգին,
Եւ քեզ կը տամ իմ այս դուտորն ամուսին,
Որ քընքշարար աղերսում է քո մասին»:

Նըրա հոգում երկնային կայծ շողշողաց,
Եւ համարձակ իր աչքերը փայլեցին.
Նա տեսնում է—արքայադուտորը կարմրած,
Այլայլում է, մորմոքւում է իր հոգին.
Եւ լի յուսով շըքեղ ընծան առնելու՝
Նետեց անդունդ՝ կամ կեանք կամ մահ գըտնելու:

Ալիքները զարնըւում են ճողրիւնով
Եւ մըրմուռով ետ նահանջում ամիերից.
Դուտորը սիրոյ հայեացքն յառած դէպի ծով՝
Ուր կոհակներ կոհակների ետեկց
Մերթ աղմուկով բարձրանում են մերթ իջնում,
Բայց պատանուն երբէք ծովափ չեն հանում:

III. ՊՈԼԻԿՐԱՏԻ ՄԱՏԱՆԻՆ

(Der Ring des Polykrates)

Նա կանգնած էր տանիքի վրայ և բարձրից
Աչքերն յառած՝ նայում էր դոհ, բերկրալից
Դէպի Սամոս՝ ներքև ընկած փառաւոր:
«Այս բոլորը, նայիր, ինձ է ենթակայ»,
Եգիպտացոյ արքային է դիմում նա.
«Սոստովանիր, որ ես շատ եմ բախտաւոր»:

—Աստուածները հոգատար են քեզ համար.
Ոսոխներըդ՝ երբեմն քեզ հաւատար՝
Հիմա արդէն հընադանդ են քո կամքին.
Բայց ապրում է դեռ մի ոսոխ նենդաւոր.
Ես չեմ կարող քեզ անւանել բախտաւոր,
Քանի որ նա կենդանի է տակաւին:

Եւ հաղիւ էր աւարտել նա,—Միլետից
Երևում է համբաւարեր դաշնակից.
Եւ տիրանին ուղղում է նա այս խօսքեր.
«Տէր, թող զոհի բոյրը երկինք վերանայ,
Եւ պըսակը գեղեցկահիւս ու դափնեայ
Շըքեղապէս թող զարդարէ քո մագեր»:

«Քո թըշնամին խողխողւած է նիզակով.
Ինձ ուղարկեց քեզ մօտ ուրախ այս լըրով

Հաւատարիմ զօրապետդ Պոլիդոր»:
Ասաց և սև կոնքից հանեց թըշնամու
Արիւնաշաղ կըտրած գըլուխն ահարկու՜,
Որից կաթում էր դեռ արիւնը ծործոր:

Թագաւորը ետ ետ քաշեց ահարեկ.
«Ըզգուշացիր», ասաց վըշտոտ, «ու երբէք
Մի՛ հաւատար այդ յեղյեղուկ քո բախտին.
Փոթորիկը ծովի վրայ անարգել
Դեռ կարող է քո այդ բախտը կործանել.
Նաւատորմըդ դեռ չէ հասել ծովափին»:

Հաղիւ թէ նա այս խօսքերն աւարտեց,
Ահա ժըխոր նըրան իսկոյն ընդհատեց,—
Ծովեզերքից հասաւ աղմուկ խընդավառ.
Ծանրաբեռնւած օտարերկրեայ դանձերով
Մըտնում էին նաւահանգիստ ապահով
Անթիւ հաւեր—կայմերի խիտ մի անտառ:

Թագաւորի հիւրըն ապշեց, զարմացաւ.
«Քո բախտն այսօր բարիք բերեց քեզ անբաւ.
Բայց վախեցիր փոփոխական քո բախտից.
Քաջամարտիկ կըրետացիք խըմբերով
Սպառնում են քեզ պատերազմի տագնապով.
Եւ հեռու չեն քո տէրութեան արիւնքից»:

Հազիւ թէ նա այս խօսքերըն աւարտեց,
Ափից եկաւ բաները և աւետեց,
Եւ բիւր ձայներ որոտացին. «Յաղթանակ,
Ազատուցինք թըշնամական աղէտից.
Կըրեաացոց ոյժը փըշըւեց փոթորկից,
Եւ վերջացաւ պատերազմը դըժընդակ»:

Բարեկամը երբ այս լրսեց տըխրաղէմ,
«Իրաւ, առաց, ևս երջանիկ քեզ կ'ասեմ.
Բայց վախեցնում է ինձ քո մութ ապագան.
Աստուածների նախանձից եմ վախենում.
Կեանքում բերկրանք երբէք մենք չենք վայելում
Առանց ցաւի, առանց վըշտի դառնութեան»:

«Ինձ էլ երբեմն յաջողում էր ամեն բան.
Իւրաքանչիւր ձեռնարկութեանս անպայման
Աջակից էր օրհնութիւնը երկընքի.
Բայց ունէի ես մի գաւակ փայփայած,
Պաշտում դաւակ,—բայց իմ ձեռքից նա գընաց,
Ես իմ պարտքը երջանկութեամբ հատուցի»:

«Ուստի, եթէ փըրկւել կուզես փորձանքից,
Խընդրիր ապա բարեխընամ երկընքից
Երջանկութեանդ նաև կըսկիծ ուղարկել.
Դեռ չեմ տեսել բարի վախճան այն անձանց,
Որոնց գըլխին աստուածները գերապահծ
Առատ ձեռքով միշտ բարիք են թօթափել»:

Թէ չը լրսեն աստուածները երկնային,
Հետեւիւր դու բարեկամիդ խորհրդին.
Ինքըդ վըրադ դըժբախտութիւն հրաւիրիր.
Քո ունեցած բոլոր հարուստ գանձերից
Ինչ որ սըրտիդ համար թանկ է ամենից,
Վերցընու և այն ծովի խորքը շըպըրտիր»:

Եւ միւսըն ահաբեկւած ասում է.
«Այն բոլորից, ինչ որ կըղզում պահում է,
Այս մատանին է ամենից թանկագին.
Էրիններին այս նըւիրել ես կ'ուզեմ,
Որ իմ բախտին ներողամիտ գըտնըեն»:
Ու ծով ձրգեց իր հազագիւտ մատանին»:

Առաւօտեան հազիւ ծագեց արեգակ,
Ջըկնորս մըտաւ արքայական յարկի տակ
Եւ խընդագէմ առաց կարող իշխանին.
«Տէր, այս ձուկը իմ ձեռքովըս եմ բըռնել.
Ոչ մի ուռկան դեռ այսպիսին չէ հանել.
Իբրեւ ընծայ, բերում եմ իմ արքային»:

Խոհարարը երբ այն ձուկը պատառեց,
Ապշած իսկոյն արքայի մօտ ըշտապեց
Եւ գոչում է վառ հայեացքով ողկոր.
«Նայիր, իմ տէր, քո սևիական մատանին
Ջըկան միջին գըտայ ես այս բոպէին.
Երջանկութիւնդ սահման չունի, թագաւոր»:

Այն ժամանակ ասաց հիւրը օրրտադող.
«Ես այսուհետ այստեղ ապրել չեմ կարող.
Դու չես կարող էլ բարեկամ ինձ մընալ.
Աստուծոները քո մահ, կորուստըդ կուզեն.
Գընամ, որ ես քեզ հետ մէկտեղ չը կորչեմ»:
Ասաց այսպէս և ըշտապեց հեռանալ:



IV. Ե Ր Ա Չ Խ Ի Ք

(Die Bürgschaft)

Մէրոսըն իր շորում պահած մի դաշոյն,
Դիոնիսին հետեւում էր գողի պէս.
Լըրտեաները նըրան բըռնում են խկոյն.
«Ինչի՞ համար էր այս դաշոյն, ասն մեզ»,
Բըռնաւորը հարցընում է խըստապէս:
— «Պիտի քաղաքն ազատէի տիրաննից»:
«Պիտի զըղջնս դու քո խաչի վըրայից»:

— «Ես պատրաստ եմ, ասաց, մահըս ընդունել
Եւ սեփական կեանքիս համար չեմ խընդրում.
Բայց եթէ դու շընորհ կուզես ինձ անել,
Երեք օրւայ ժամանակ եմ աղերսում.
Ես իմ քըրոջ պըսակին եմ ըշտապում.
Բարեկամիս, իրրե պատանդ, պահեցէք,
Թէ ուշանամ, իմ տեղ, նըրան խաչեցէք»:

Ժըպտաց արքան իր չար ժըպտով նենգաւոր
Եւ խորհելուց յետոյ ասաց Մէրոսին.
«Ես կարող եմ քեզ տալ ուղիղ երեք օր.
Այս միջոցը երբ որ անցնի լիովին,
Եւ դու եկած դեռ չես լինի տակաւին,
Գիտցիր, որ նա պիտի մեռնի քո տեղակի,
Իսկ դու պատժից ազատ ես այն ժամանակ»:

Ու նա գընաց ընկերի մօտ:—«Մեր արքան
Մի անօրէն գործի համար հրամայեց
Ի խաչ հանել, ինձ ենթարկել չար մահւան.
Բայց երեք օր նա ժամանակ ինձ տւեց,
Որ իմ քըրոջ հարսանիքին ես գընամ.
Արքայի մօտ մընս գու իմ փոխարէն,
Մինչև որ գամ, և քեզ իսկոյն կ'ազատեն»:

Հաւատարիմ բարեկամը լուռ գըրկեց,
Ապա իրան իսկոյն յանձնեց ախրանին.
Իսկ միւսը հրաժեշտ տրւեց ու մեկնեց:
Երրորդ օրը դեռ չէր բացւել տակաւին,
Նա ներկայ էր արդէն քըրոջ պըսակին.
Եւ այնուհետ վերադարձաւ հոգատար,
Որ ժամ առաջ շուտ տեղ հասնէր, չ'ուշանար:

Ճանապարհին անձրև տեղաց յորդառատ,
Ու լեռներից թափւում էին վըտակներ,
Ամեն կողմից վազում առու, հեղեղատ.
Ձուպը ձեռին դէպ ավին ուղղեց իր քայլեր.
Կամուրջն այնտեղ քանդում էին ալիքներ,
Եւ յորձանքը գըղըրգիւնով զարնւեց
Ու կամըրջի կամարները խորտակեց:

Անմըխիթար մօտենում է եզերքին.
Որքան հեռու էր հայեացքը բևեռում,

Որքան էլ ոյժ էր նա տալիս իր ձայնին,—
Ոչ մի ափից մի նաւակ չէ երևում,
Որ իջեցնէր իր անձկալի ափերում,
Ոչ մի ձըկնորս չէ մօտենում մակույկով.
Եւ հեղեղը կատաղում է, ինչպէս ծով:

Նա լալիս է և աղօթում գետափին՝
Դէպի Զեէս իր ձեռքերըն ամբարձած.
«Դադարեցրո՛ւ հեղեղատը մոլեգին.
Արագ անցնում են ժամերըն իմ հաշւած.
Արևն արդէն գնիթթումն է կանգնած.
Երբ մայր մըտնի, և չը հասնեմ ես քաղաք,
Բարեկամըս պիտի մեռնի իմ տեղակ»:

Բայց հեղեղըն աւելի է կատաղում,
Ալիքները գըլորւում են շարունակ,
Ժամերն անցնում, ալիքի պէս, և գընում:
Սուրսափահար նա սիրտ առաւ, համարձակ
Նեւեց իրան դէպի հեղեղն այն վայրագ.
Եւ իր հըզօր բազուկներով պատառեց
Կոհակները—Աստուած նըրան խընայեց:

Հասաւ գետափ, հեղեղատից դուրս ելաւ,
Շընորհակալ եղաւ փըրկիչ Տիրոջից.
Յանկարծ մի խումբ աւազակներ նա տեսաւ,
Որոնք եկել էին մօտիկ անտառից.
Ճամբան կըտրած՝ պատրաստ էին նըրանից

Ուրեւել կեանքը,— և սպառնական լախտերը
Կաշկանդում են ուղևորի քայլերը

— «Ի՜նչ էք ուզում», գոչեց սարսուռ երեսին.
«Ուրիշ ոչինչ չունիմ, բացի մի կեանքից,
Եւ այն էլ ես պիտի տամ իմ արքային»:
Գաւազանը յափըջտակեց նա մէկից.
— «Դէ, յանուն իմ բարեկամիս, թողէք ինձ»:
Ու երեքին ձեռքեց հըզօր հարւածով,
Միւսները խուսափեցին ըշտապով:

Արեւակը բարձրից կըրակ է թափում,
Եւ յարտու աշխատանքից դադարած՝
Թուլանում է և ծընկները խոնարհում.
— «Աւազակից ինձ փրկեցիր, ո՞վ Աստուած,
Ինձ հեղեղից հանեցիր, Տէր ողորմած,
Ծիթթէ հիմա այստեղ պիտի նըւաղեմ
Եւ սիրելի բարեկամիս կորցընեմ»:

Բայց նըրա մօտ ահա լըսում է յանկարծ
Մի աղբիւրի արծաթաձայն խոխոջիւն.
Նա կանգնում է, ալանջ դընում ըզմայլած,
Եւ տեսնում է— ժայռի ճեղքից կարկաշուն
Մի կենդանի սառն աղբերակ է թափում.
Նա կըռացաւ ուրախ դէպի թարմ շիթեր
Եւ զովացրեց իր արևառ անդամներ:

Արեւակը տարածել է իր շողեր,
Թաւուտի մէջ և սիգապատ մարգերում
Նըկարում է հըսկայական ըսուերներ:
Ճանապարհին երկու անցորդ է տեսնում,
Արագ արագ նըրանց մօտից ըշտապում
Եւ լըսում է, որ ասում են մէկ մէկու.
«Հիմա նըրան պիտի տանեն խաշկու»:

Ահ ու դողը թեւոտեց ոտները,
Ծանըր հոգսը առաջ մըղեց թըշւառին.
Ահա հեռից վերջալոյսի շողերը
Միրակուղի պարիսպներին փայլեցին:
Ֆիլոսոփաութիւն, հաւատարիմ տընպահին,
Անակընկալ ճանապարհին պատահեց,
Եւ սարսափով նա իր տիրոջ ճանաչեց:

«Դարձիր. դու էլ չես փրկիլ քո ընկերին.
Փըրկիր գոնէ դու քո անձը սեփական,
Արդէն նըրա կեանքի բոպէն է վերջին.
Նա վաղուց է քեզ սպասում է ժամէ ժամ.
Յուսով էր նա, որ կը գայ իր բարեկամ,
Եւ, չը նայած բըռնաւորի չար ծաղրին,
Նա դէպի քեզ հաւատ ունէր տակաւին»:

— «Եթէ ուշ է, և չեմ կարող այսուհետ
Իբրեւ աղնիւ ազատարար երևալ,
Գոնէ ես էլ կը մահանամ նըրա հետ:

Արիւնարբոս տիրան, դու չես պարծենալ,
Ես կարող չեմ իմ սուրբ ուխտը մոռանալ:
Մի անգամից թող նա բերէ երկու զոհ,
Որ հաւատայ մըտերմութեան և սիրոյ»:

Արեգակը մայր է մըտնում: Դարպասից
Տեսաւ—արդէն այնտեղ խաչ է բարձրացած.
Բազմութիւն էր շըրջապատել չորս կողմից.
Բարեկամին քարշում էին կապկապած:
Եւ նա ուժով ճեղքեց ամբոխն ու գընաց.
— «Ի՜նձ ըստանիր, դահիճ, այն ես եմ անա,
Որի համար երաշխաւոր եղաւ նա»:

Ժողովուրդը հիացաւ այս արարքից.
Երկուսն էլ խելոյն իրար գըրկեցին
Եւ լաց եղան ցընծութիւնից ու վըշտից.
Թարդկանց աչքերն արտասուքով փայլեցին.
Ձարմանալի լուրը տարան արքային:
Եւ նա լըցւած մարդկային վեհ զգայումով՝
Հըրամայեց նըրանց բերել ճապճեպով:

Երկար նայում էր նա նըրանց զարմանքով.
Յետոյ ասաց. «Ձեզ յաջողեց ամեն բան.
Դուր իմ սիրտը փափկացըրիք ձեր սիրով.
Մըտերմութիւն կայ աշխարհում անպայման,
Ուստի և ինձ հաշւեցէք ձեր բարեկամ.
Թողէք միայն, այս եմ խընդրում ձեզանից,
Ձեզ հետ լինեմ երրորդ ընկեր դաշնակից»:

V. ՀԵԿՏՈՐԻ ՀՐԱԺԵՂՏԸ

(Hektors Abschied)

Անգրումախ

Իմ Հեկտորը կամենում է ինձ հրաժեշտ տալ մըշտա-
պէս,
Գընալ այնտեղ, որտեղ անյապթ բազուկներով Աքիլլէս
Պատրոկլէսի յիշատակին սոսկալի զոհ է բերում.
Ո՞վ այսուհետ քո փոքրիկին կը սորվեցնէ սուր շարժել,
Ձըգել նիզակ և երկնային ասուածներին աղօթել,
Երբ որ կ'իջնես դու տարտարոս, կը դեգերես խաւա-
րում:

Հ Ե Կ Տ Ո Ր

Իմ թանկագին ամուսինս, բաւական է արտասուես.
Ես գընում եմ դէպի անեղ պատերազմի տապաւէզ՝
Այս ձեռքերով պաշտպանելու մեր հայրենի Պերգամոս.
Ասուածների սուրբ օջախի համար ցրման կըուելով՝
Ես կը մեռնեմ, բայց հայրենեաց աղատիչը լինելով
Ես չեմ գընա մինչև ԸՍտիքս, ես չեմ իջնի տարտարոս:

Անգրումախ

Էլ յաւիտեան լըսելու չեմ ձայնիդ քաղցր հընչիւններ-
Անգործ ընկած սըրահի մէջ կը ժանգոտի քո սուսեր.

Պրիամոսի ազնիւ ու քաջ տոհմը պիտի կործանուի,
 Պիտի երթաս այնտեղ, ուր որ երբէք արեւ չէ փայլում,
 Որտեղ մըռայլ անապատում տըխուր Կոցիան է մըռն-
 չում,
 Եւ քո սէրը Լէթա գետում պիտի մեռնի ու կորչի:

Հ Ե Լ Տ Ո Ր

Ես իմ սրբախ բոլոր յոյզերն, բոլոր խոհերս ես կուզեմ,
 Որ Լէթայի խաղաղ ջրերում խորասուզեմ ու թաղեմ,
 Բայց ոչ երբէք իմ այս սէրը, որ չունի վերջ և սահ-
 ման:

Ահա—արդէն պարըսպի վրայ որսի ձայն եմ ես լրսում.
 Կապիր մէջքիս սուրը. մի լար: Մի՞թէ ինձ չես հաւատում.
 Լեթա գետում չի մեռնելու Հեկտորի սէրն յաւիտեան:



ՎԼ. Յ Ո Յ Ս

Կեանքի շաւղումը որքան սիրում են
 Մարդիկ երազել փայլուն ապագան
 Եւ ի՞նչ շուտ հասնել նրբանք տենչում են
 Երջանիկ, սակի ըղձի կատարման:
 Թռչնում է աշխարհ և նորից ծագկում,
 Բայց մարդ յաւիտեան լաւին է սպասում:

Ծընւում ենք թէ չէ—և յոյսը մեր քով
 Ճախրում է, ուրախ մանկան հետ խաղում.
 Պատանուն քարշում գիւթական չոզով
 Եւ դազաղի մօտ ծերին ըստօտում.
 Եւ նա ձրգում է կեանքի ճանապարհ
 Մահից յետ հանգիստ գրտնելու համար:

Մի ցընորք չէ սա, հոգու մըխիթար
 Եւ ոչ յիմարի անմիտ զառանցանք.
 Մեր սիրտն ասում է, որ կայ այլ աշխարհ,
 Ուր կատարւում է լաւագոյն բաղձանք:
 Ներքին ձայնն է սա մեր ջերմ հաւատի.
 Մի՞թէ երբ և է նա մեզ կը խարի:

VII. ԵՐԿՐԻ ԲԵԺԱՆՈՒՄԸ

(Die Teilung der Erde)

— «Առէք երկիրն», ասաց Զեսը երկրնքից
 Ի լուր մարդկանց, առէք, ձերն է այս աշխարհ,
 Ժառանգութիւն թողնում եմ ձեզ այս օրից.
 Բաժանեցէք հղբայրարար և արդար»:

Ով ձեռք ունէր, վազեց դէպի իր բաժին.
 Մանուկ ու ծեր, դէհ, առաջ են ըշտապում.
 Մշակն առաւ պլտուղները դաշտային,
 Մեծատունը զընաց որսալ անտառում:

Վաճառականը լըցնում է ամբարներ,
 Կրօնաւորը ընտրում է հին, թունգ գինին.
 Արքան փակում հրապարակներ, կամուրջներ
 Եւ յայտնում է. «Տասանորդը—իմ բաժին»:

Ամենից ուշ, երբ բաժանւած էր աշխարհ,
 Հեռու տեղից եկաւ պոյէտն անագան.
 Բայց ոչ մի տեղ, աւանդ, ոչինչ էլ չը կար.
 Եւ ամեն ինչ ունէր տէր ու տիրական:

«Վա՛յ ինձ, մի՞թէ բոլոր մարդկանց մէջ միայն
 Մոռացւած եմ ես, սիրեցեալ քո որդին»,

Կողկողագին խօսեց պոյէտն ողբաձայն
 Եւ հըրաժեշտ արեց Զեսի գահուրին:

— «Մինչ երազով տարւած էիր դու երկրում»,
 Խօսեց աստուած. «էլ մի վիճիր դու ինձ հետ.
 Ո՞ւր էիր դու, երբ աշխարհն էր բաժանւում»:
 «Քեզ մօտ էի», պատասխանում է պոյէտ:

«Իմ հայեացքը դէմքիդ էի բեռած,
 Լըսում էի զաշն հընչիւններ երկրնքի.
 Ներքի, որ քո մաքուր լուսով հրապուրւած,
 Աշխարհային բարիքները կորցըրի»:

— «Փոյթ չէ, ասաց Զեսն ազնիւ պոյէտին,
 Էլ իմը չեն աշուն, և որս, և շուկան.
 Բայց թէ կուգես ապրել ինձ հետ միասին,—
 Երկինքը բաց է քո առջև յաւիտեան»:



Հ Ա Յ Ն Ի Ի Յ

I. *Lorelei*

(Lorelei)

Չ'գիտեմ ի՞նչ է նշանակում,
Որ տըխուր եմ ես այսպէս.
Կայ հինաւուրց մի հեքեաթ՝
Գըլլսիս նըստած մեխի պէս:

Ձով է օդը, մութն ընկնում է,
Հոսում Ռէյնը կապուտակ.
Լերան ծայրը փայլիլըում է
Վերջալոյսի շողի տակ:

Այնտեղ՝ վերեւ նըստած է կոյս՝
Ձըքնադադեղ, ոսկեհեր.
Իր զարդերը շողշողում են.
Նա սանրում է իր մազեր:

Սանրում է նա ոսկի սանրով
Եւ երգում է մի նըւագ,
Այնքան զիւթիչ և գեղեցիկ,—
Մի աննըման եղանակ:

Յափըտակած քաղցրիկ երգից՝
Ձըկնորսըն իր նաւակում
Ձը նըկատեց իր տակ խութեր—
Միայն վերեւ է նայում:

Եւ ձըկնորսըն իր նաւակով
Ժէր քարերին զարնըւեց:—
Ա՛խ, իր գիւթիչ մեղեդիով
Լօրելէյըն այդ արեց:

— — —

II. *U n d' r*

Հեռու հիւսիսում՝ ժայռի կապաթին
Տըխուր, միայնակ կանգնած է սոճին.
Նիրհում է. ձերմակ սաւանի նըման
Ձիւն ու եղեամբ ծածկել են նըրան:

Եւ արմաւ է նա տեսնում երազում,
Որ լոյս-արեւի ծագման աշխարհում,
Հեռու, արեւու ժայռի կատարին
Աճում է մինակ՝ տըխուր և լըռին:

ԼՕՆԳՖԵԼԼՕՅԻՑ

Նեղրի նրագր

Արևակէզ, աշխատանքից վաստակած՝
Երեսի վրայ գետին փրուեց թուլացած.
Հասկերն անշարժ կանգնած էին անմըուռնչ.
Արևի տակ նիրհում էր նա լուռ ու մունջ:
Պատրանք էր այն, թէ մի երազ խարուսիկ,—
Բայց նա տեսաւ իր հարազատ հայրենիք:
Տեսնում է նա—հեռու մի խուլ տափարակ,
Ուր սահում է Նիգեր գետը կապուտակ.
Արմաւենի ծառերի տակ վրաններ,
Ուր դիմում են սարի ետքից քարվանդներ:
Մարգիկ ուրախ, չորս կողմ աղմուկ և խրնդում.
(Արքայ էր նա այն հեռաւոր աշխարհում).
Ծաղկանց միջին կանգնած է իր ամուսին,
Շըրջապատւած զաւակներով թանկագին.
Զաւակները փարւում են մօրն, աղաչում
Սիրեցեալ հօր գընալ փընտրել անտառում...
Եւ ահա ջնրմ երազի մէջ ցանկալի
Լըռիկ-մընջիկ նա լալիս է սըրտալի:
Եւ էլ չը զգաց, որ չար տէրը մըտրակով
Զարկեց կըրծքին, քացի տըւեց ոտքերով,
Եւ բարկութիւնը զըսպելով ակամայ
Նա հազիւ հազ արտասանեց. «Օ՜, մեռայ»:

Գ Է Օ Թ Է Ի Ց

Մինյօն

Գիտե՞ս արդեօք այն աշխարհը, ուր կիտրոնն է ծաղ-
կում,
Կանաչագեղ թաւուտի մէջ ոսկի նարինջ վառվրում.
Ձինջ եթերից գուրգուրալով շըշընջում է մեղմ քամին,
Բարձրակատար դափնին աճում, լուռ նիրհում է մըր-
տենին:

Գիտե՞ս դու արդեօք:—
Օ՜, անգին, այնտեղ
Կ'ուզէի քեզ հետ
Սըլանալ մէկտեղ:

Գիտե՞ս դու այն ապարանքը և հոյակապ իր սիւներ,
Ուր փայլփրլում շողշողում են սըրահներ ու սենեակ-
ներ.
Կանգնած նայում են մարմարեայ արձանները շարեշար
Եւ ասում են. «Թըշւառ մանուկ, ի՜նչ վիճակի դու
հասար:

Գիտե՞ս դու արդեօք:—
Օ՜, հրեշտակ, այնտեղ
Կ'ուզէի քեզ հետ
Սըլանալ մէկտեղ:

Գիտե՞ս արդեօք դու այն լեռները և երկնաճեմ իր կա-
ծան,

Ուր գլորաստըն ամպերի մէջ որոնում է իր ճամբան,
Անձաւներում խլրլրտում է վիշապների հին սերունդ,
Եւ ժայռերից աղմըկելով հոսում ջուրը դէպ անդունդ:
Գիտե՞ս դու արդեօք:—

Այնտեղ է, ծ հայր,
Գլնում մեր ուղին.
Երթանք միասին.



Մ Ը Ր Գ Ը Ր Ի

(Պուշկինի)

Հոգով ծարաւի վերածնութեան՝
Դեգերում էի մռայլ անապատում,
Եւ մի սերովբէ ահա վեցթեան
Յանկարծ երևաց իմ ճանապարհում:
Մատներով թեթե՛ւ երազի նրման՝
Անցաւ իմ պըղտոր բիբերի վըրան,—
Եւ լայն բացեցան իմաստուն բիբեր,
Ինչպէս վախեցած արծըւի աչքեր:
Իմ ականջներին նա թեթեւ գիպաւ.
Եւ լըցրեց ժըխոր և ձայներ անբաւ,—
Եւ ես լըսեցի երկնի երերում,
Եւ վերին թըռիչք սուրբ ոգիների,
Եւ սողունների շարժումը ծովում,
Եւ հովիտներում փըթթելը որթի:
Եւ իմ բերանին մերձեցաւ հըպեց
Եւ մեղսոտ լեզուս արմատից պոկեց,
Իմ դատարկախօս լեզուն նենգաւոր,
Եւ իմ բերանում՝ մեռեալ ու սառած՝
Դըրեց իմաստուն օձի խայթ հըզօր
Նա իր աջ ձեռքով՝ արիւնով ներկեած:
Եւ նա իմ կուրծքը սըրով պատառեց
Եւ հանեց սիրտը՝ դողդոջ ու տըկար՝
Եւ իմ պատառած կըրծքի մէջ դըրեց

Սըրաի փոխարէն՝ կըրակ բոցավառ:
Անապատի մէջ լուռ, դիակի պէս,
Ընկած էի ես,—և ասաց ինձ Տէր.
«Ելիր, մարգարէ, և լըսիր և տես.
Իմ կամքը թող քեզ լինի քաջալեր,
Եւ ծով ու ցամաք շըրջադայելով
Մարդկանց սըրտերը բորբոքէր խօսքով»:



Գ Ո Վ Ի Ի Ա

(Պօէմա Տննիխանի)

Մեզնից շատ առաջ իր մեծ գըղեակում
Մըռայլ ու դաժան մի կոմս էր ապրում.
Ունէր նա բարի, գեղեցիկ մի կին՝
Սըրտով նըւիրւած իր ժողովըրդին:
Չար կոմսը մի օր հրաման արձակեց,
Երկիրը խիստ ծանր հարկի տակ գըրեց:
Թըշուտ մայրերը՝ մանկանցը գըրկած՝
Դէպի գըղեակը խումբ-խումբ գիմեցին
Եւ մեծ բազմութեամբ աշտեղ ժողովւած՝
Լացով ու կոծով այսպէս գոչեցին.
«Ծանըր է հարկը. եթէ վըճարենք,
Բոլորը քաղցից-սովից կը մեռնենք»:

Փողիւան գընաց իր ամուսնու մօտ.
Նա իր դահլիճում շըրջում էր մենակ,
Առանց ընկերի, մըռայլ ու ցասկոտ,—
Մօտին կար միայն շըների ոհմակ:
Թերեւէ էր առաջ մօրուքը ցից-ցից,
Երկայն գիսակներ թափած հաւից:
Ընդհանուր ոգրից Փողիւան պատմեց
Եւ իր ամուսնուն խընդրեց աղաչեց.
«Ծանըր է հարկը. եթէ վըճարեն,
Բոլորը քաղցից-սովից կը մեռնեն»:

Ու կոմսը կընոջ նայեց վայրարար.
 — Հերիք է, ասաց, Գողիւա, գիտեմ,
 Դու չես թողնի փուճ խուժանի համար
 ձրկոյտըդ նոյն իսկ ասեղով ծակեն:
 «Ես մինչև անգամ պատրաստ եմ մեռնել»...
 Պատասխանում է Գողիւան կոմսին,
 Որ դառ քրքրիջով ըսկըսեց երգւել,
 Թէ չէ հաւատում նրա խօսքերին.
 Եւ աղամանդեայ օղին դաշելով
 Ասաց ամուսնուն. «Բառեր են, բառեր»:
 Իսկ նա. «Օ', ինչո՞վ, ով տէր իմ, ինչո՞վ
 Արդեօք հաստատեմ իմ ասած խօսքեր»:
 Եւ կոմսըն ահա ամուսնու համար
 Հընարեց մի չար, անխիղճ փորձարար:
 — Ձիով մերկ անցիր քաղաքի միջով,
 Ու երկրի հարկը ես կը վերցընեմ,—
 Ասաց, զըլուխը թափահարելով,
 Ժրպտաց հեգնօրէն,
 Հանգիստ քայլելով սըրահից մեկնեց
 Եւ իր շրներին ետեից կանչեց:

Մընաց միայնակ Գողիւան: Հոգում
 Մըտքերը, սառտիկ փոթորկի նըման,
 Յուզում էին և իրար հետ կըռում,—
 Բայց յաղթութիւնը մընաց զըթութեան:
 Քաղաք ուղարկեց մունետիկներին,
 Որ փող հարելով յայտնեն ամենքին,
 Թէ ինչ պայման է իր տէրը զըրել:

Բայց նա վըճռել է երկիրը փըրկել:
 «Ինձ բոլորեքեան սիրում են, ասաց.
 Ուստի թո՛ղ մընա՛ն տըներով փակւած.
 Թող մինչև կէսօր ոչ մէկը չ'ենէ,
 Եւ ոչ մի հատ աչք փողոց չը նայէ.
 Եւ երբ ես ձիով փողոցով կ'անցնեմ,
 Դըռներ, լուսամուտ—բոլորը կողպեն».

Յետոյ Գողիւան սենեակը գընաց,
 Արձակեց գօտին, չար լօրդի ընծան,
 Մի գոյգ արծիւով շըքեղ զարդարւած.
 Բայց շունչը հատաւ... աչքերը սեցան...
 Շարժւում էր դանդաղ, ինչպէս երկընքում
 Ամառայ լուսին կաթնագոյն ամպում,
 Յանկարծ ըսթափւեց, զըլուխը շարժեց,
 Եւ իսկոյն խիտ-խիտ մետաքսեայ հերը
 Կոհականըման ուսերից թափւեց
 Եւ հասաւ մինչև նըրա ծընկները:
 Հանդերձըն արագ ձըգեց իր հագից
 Եւ ըզգոյշ իջաւ աստիճաններից:
 Պայծառ շողի պէս, թեթե սահելով
 Երկչոտ ամօթով
 Միւնից դէպի սիւն իջաւ կոմսուհին,
 Մինչև, Վերջապէս, հասաւ դարպասին:
 Դըրսումըն իր ձին պատրաստ էր արդէն.
 Վըրան ծիրանի, գրոշմեր ոսկեղէն:
 Եւ իր ձին հեծած
 Գողիւան գընաց:

Քամին դադարեց, զեփիւռը լըռեց,
 Եւ օդը կարծես իր շունչը պահեց:
 Մի գամփըռ հաչաց—և Գողիւայի
 Սյտերը դարձան կարմիր ծիրանի...
 Ձիու տոփիւնը սարսուռ էր աղբում,
 Եւ մերկ կոմսուհուն այնպէս էր թըւում,
 Որ և պատերում բացւել են ճեղքեր,
 Եւ հետաքըրքիւր նայում են աչքեր,
 Ու ամեն կողմից նայում են նըրան:
 Բայց առաջ առաջ գընաց Գողիւան,
 Մինչև երևաց նըրա առաջև
 Շըրջապարիսպի գոթական կամար
 Եւ այն գոթական կամարի ետև
 Փըռած դաշտօրայք, մարգեր ծաղկալառ:

Եւ նա այնուհետ վերըստին դարձաւ՝
 Հազած կուսական առաքինութիւն:
 Բայց մէկը, որ իր կեանքումը բընաւ
 Չը գիտէր երբէք ազնիւ ըզգացում,
 Կըրկնափեղկի մէջ բացեց մի ճեղքւած,
 Դողղոջ մօտեցաւ, կըպաւ այն ճեղքին,
 Բայց զեռ տըռփանքին յագուրդ չը ստացած՝
 Սչքերը խաւար փառով ծածկեցին:

Սակայն Գողիւան ոչինչ չ'իմացաւ:
 Նա գընաց, մինչև դըղեակը հասաւ:
 Արագ բարձրացաւ նա իր սենեակը,

Հանդերձը հագաւ, դըրեց իր թաւը,
 Գընաց կոմսի մօտ և ժողովըրդից
 Վերցըրեց հարկը, փըրկեց աղէտից.
 Եւ թողեց այնքան անգին մի անուն,
 Որ չի մոռացի մարդկանց սըրտերում:



Փ Ո Թ Ո Ր Ի Կ

Դրամատիկական պոէմա հին Յունական կեանքից

Տ Ե Ս Ս Ր Ա Ն 1.

Աթէնքի նաւահանգիստը: Ծովի վրայ երեւում են նաւեր:

ՆԱԽԱՊԵՏ—(նաւաստիներին)

Վերջապէս ահա բարձրացաւ քամին:
Մենք կարող էինք հէնց այսօր և եթ
Ճանապարհ ընկնել, բայց դեռ կըսպասենք:
Իսկ այժմ առէք երկու սև ոչխար,
Տարէք զոհելու մեծ Պոսէյդոնին:

(Նաւաստիները հեռանում են: Գալիս է Դիագորը):

ԴԻԱԳՈՐ. Ողջոյն, Թերամէն:

ՆԱԽ. Դձև ես, Դիագոր: Այնպէս փոխուել ես,
Միայն ձայնիցդ քեզ ճանաչեցի:

ԴԻԱԳ. Ազնիւ բարեկամ, ամբոխի ձեռքից
Հագիւ ազատա՞ծ՝ ես քեզ եմ գիմում,
Մանկութեան անգին իմ բարեկամին:
Ապաստան տուր ինձ քո նաւի վըրայ,
Եւ իմ անունը թո՛ղ ծածուկ մընայ:

ՆԱԽ. Ի՞նչ գունատուել ես... ձայնդ էլ դողում...
Ի՞նչ է պատահել քեզ, ասան խընդրեմ:

ԴԻԱԳ. Դեռ ասան թէ ե՞րբ դու պիտի մեկնես:
ՆԱԽ. Բն, ինչպէս ինձնից ծածուկ է պահում

Վըշտի պատճառը: Դէ ասա խընդրեմ,
Այդ ի՞նչ քըրմական մօրուք ես կախել,
Ինչո՞ւ զառամիալ ձերունու նըման
Կորացըրել ես քո ջահիլ մէջքը,
Ինչո՞ւ համար է այդ գաւազանը:

ԴԻԱԳ. Մի՞թէ իմ մասին չես լրտել ոչինչ:
ՆԱԽ. Շատ բան: Բայց մի՞թէ ես կը հաւատամ
Թըշնամիներիդ բամբասանքներին:
Ինչե՞ր են խօսում... Մի՞թէ, ճըմարիտ,
Դու խորտակել ես սուրբ արձանները:

ԴԻԱԳ. Այո, բարեկամ:

ՆԱԽ. Ուզի՞ր ես ասում... Ա՛խ, ինչ սոսեմ քեզ:
Ես քանի՜ անգամ ասել կըրկնել եմ.
Թո՛ղ քո անխորհուրդ այդ քարոզները:
Այդ ինչ վայրենի փափագ է, ասան,
Խըլել մարդկանցից նըրանց հաւատը:
Ինչո՞ւ տապալել այն արձանները,
Որոնց պաշտում է մեր ժողովուրդը,
Եւ վիրաւորել սուրբ ըզգացմունքը:

ԴԻԱԳ. Հաւատան, ընկեր, ես հաշիւ չունիմ
Ոլիմպեաններից և ոչ մէկի հետ.
Թէ Զևս թէ Հերա և թէ Պոսէյդոն,
Եւ անմահների ամբողջ ժողովը
Թո՛ղ Ոլիմպոսի պայծառ գագաթին
Քաղցրահամ նեկտար շարունակ ըմպեն
Եւ անվիշտ, անհոգ, բարձր քըրքիջով
Ձայնակցեն մարդկանց հառաջանքներին...

Բայց թըշառ մարդըն է ողորմելի,
Բարի Թերամէն, սարսափելի է
Մարդու վիճակը և միայն մարդու:
Ի՞նչպէս համբերեմ կամ ի՞նչպէս լըռեմ,
Նրբ մարդ իր երկու աչքերը փակած,
Հստորեկացել է բընութեան ձեռքին,
Մինչդեռ նա կոչւած է լինել իշխան
Եւ հրամանատար ամբողջ բընութեան,
Մինչդեռ նա պիտի բարձրանար այնպէս,
Ինչպէս արծիւը երկնականաբում:

ՆԱԽ.

Դու էլ քարոզիր լուսաւորութիւն,
Բայց արձանները ինչո՞ւ տապալել:

ԴԻԱԳ.

Թող այդ հարցերը, բարի Թերամէն:
Դու այն ասան ինձ, թէ ե՞րբ կը մեկնենք:

ՆԱԽ.

Ոչ ուշ, քան վաղը:

ԴԻԱԳ.

Ինչո՞ւ ոչ այսօր:

ՆԱԽ.

Ձը գիտե՞ս, ինչու:

ԴԻԱԳ.

Ձը գիտեմ: Գուցէ բաւականաչափ
Ճանապարհորդներ դեռ կ'ըստ չուենիս:

ՆԱԽ.

Ո՛չ, իմ ուղածից դեռ աւելի են:

ԴԻԱԳ.

Գուցէ խնդրել են, որ վաղը ելնես:

ՆԱԽ.

Ընդհակառակը, նըրանք խընդրում են,
Որ այսօր և եթ անյապաղ ելնեմ:

ԴԻԱԳ.

Գուցէ սպասում ես յաջողակ հողմի:

ՆԱԽ.

Միթէ չես լըսում հողմի շընչիւնը:
Լըսում ես—ահա: Կարծես սուկելով

ԴԻԱԳ.

Նա հրաւիրում է մեզ դէպի ծովը:
Անհատականալի, զարմանալի է:

ՆԱԽ.

Ո՛չ մի զարմանար. եթէ մենք այսօր
Մեր նաւը շարժենք, մենք կը ժամանենք
Այնպիսի խաղաղ մի նաւահանգիստ,
Ուր ոչ խելօքը և ոչ յիմարը
Ձէին ցանկանայ երբէք ժամանել—
Ծովի յատակը:

ԴԻԱԳ.

Այդ երբ Ապոլլոն քեզ տըւեց շընարհ
Մարգարէական: Ինչո՞ւ ես կարծում...

ՆԱԽ.

Դառնագին փորձով համոզւել եմ ես,
Որ այս օրն անչափ շարաքաստիկ է
Իմ նաւի համար, խիստ կորստարեր:
Թէ Պարսկաստանի ոսկի գահոյքը
Ընծայ բերես ինձ, հաւատան, այսօր
Իմ նաւը երբէք տեղից չեմ շարժի:
(Հեռւից երևում է սիկոֆանտ—լրտես):

ԴԻԱԳ.

Այս մարդըն անշուշտ որոնում է ինձ:

ՍԻԿ.

(նաւապ.) Մեր պրիտանները հրամայել են ինձ,
Որ գամ քեզ յայտնեմ ես հետեւալը:
Եթէ ընդունես քո նաւի վըրայ
Սըրբապիղծ, մօլի Դիագորասին,
Կը դատաւարաւես շարաշար մահւան:

(Դիագորին) Բարեպաշտ ծերուկ, չը գիտե՞ոարդեօք,

Թէ ուր է թագուել Դիագորասը:
Թէ գիտես, ասան. մի տաղանդ ուկի
Պարզեւ կը ստանան դատաւորներից:
(Դիագորը խուլ և համր է ձեռնում):

ՆԱԽ.

Դըրան թող հանգիստ. դա խուլ է և համր.
Ես կը կատարեմ, ինչ որ ասացիր:
(Սիկոֆանտը գնում է):

ԳԻԱԳ. Մի՞թէ և այժմ դու պիտի ապաստանես.

«Չարարաստիկ է այս օրւայ օրը»:

Թէ ինձ սիրում ես, անյապաղ մեկնենք:

Տեսնում ես—կեանքըս վրտանգի մէջ է:

Ինձ սրտնում են, և իմ գըլուխը

Գընահատւած է: Դու հօ լըսեցիր:

Հրապարակներում և փողոցներում

Իմ անունըս է միմիայն լըսւում:

Խելագարի պէս անմիտ խռժանը

Դռնում—գոչումով աղաղակում է.

«Իրագորասի գըլուխը բերէք.

Մի տաղանդ ոսկի նրա գըլխի համար»:

Քաջ յայտնի է քեզ, որ մեր Աթէնքը

Լի է հենդ, մատնիչ սիկոֆանտներով,

Որոնց գերազանց հոտառութեանը

Որսի շըներըն էլ կը նախանձեն:

Դէ, աղաչում եմ, շուտ արա, մեկնենք:

Հէնց այսօր և եթէ Հաւատան դու ինձ.

Չարարաստիկ օր չը կայ աշխարհում:

ՆԱԻ. Անկարելի է: Իսկ ինչ մընում է

Իմ բարեկամի թանկագին կեանքի

Ապահովութեան, դու միամիտ կաց:

Երթանք: Իմ տանը քեզ կը թագըրնեմ:

Անունըդ սըրտիցս հանելու համար

Նախ սիրտըս պիտի կըրծքիցըս հանեն:

ԳԻԱԳ. Շընորհակալ եմ, բարի թերամէն:

(Գնում են):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն II.

Նաւ ալեկոծ ծովի վրայ, Դիշեր, մըրիկ և փոթորիկ:

Նաւի վրայ—Նաւապետ, նաւաստիներ, ուղևորներ և
Դիւագորաս (ծպտի):

ՆԱԻ. (նաւաստ.) Դէ, արթուն կացէք, քաջ նաւաստիներ:

Քամին գընալով սաստըկանում է:

Իսկ գիշերըն էլ այնքան խաւար է...

Բայց փառք Ձեզին, որ կայծակներով

Լուսաւորում է մեր ճանապարհը:

Շուտ արէք, տղերք, առագաստները

Շուտ ժողովեցէք:

1-ին ՆԱԻ. Ի՞նչ ասաց... ինչպէ՞ս...

ՆԱԻ. Խըլացել էք դուք: Ես ձեզ ասում եմ,

Առագաստները շուտ ժողովեցէք:—

2-ՆԱԻ. Ի՞նչ արած—ամպերն այնպէս գոռում են,

Այնպէս շառաչում այս խելառ քամին,

Որ էլ ինչ զարմանք, թէ մարդ խըլանայ:

Տղերք, շուտ արէք. թէ չէ մըրրիկը

Այս ալիքներիցն աւելի արագ

Մեզ կը թըռցընէ և ընդդիմակաց

Ահեղի ժայռին մեզ զոհ կը բերէ:

ՆԱԻ. Այդպէս, եռանդով, ժիւր նաւաստիներ:

Քամին դառնում է սոսկալի մըրրիկ,
 Ի՞նչպէս կատաղում և մոլեգնում է...
 Իսկ այս կայմերը թնչպէս են հեծում,
 Կարծես թէ իսկոյն պիտի ջաջախեն
 Եւ կըտոր կըտոր ծովի մէջ թափւեն...
 Մեր գըրութիւնը վըտանգաւոր է:
 Բայց ըզգոյշ կացէք, իմ նաւաստիներ,
 Որ չը վըհատեն ուղևորները:
 Մահացու մեղք է տագնապի ժամին
 Հանգցընել մարդու վերջին յոյսերը:
 (Մօտենում է Յ-րդ նաւաստին՝ անհանգիստ)

Յ-ՆԱԻ. Նաւապետ, այնտեղ ուղևորների
 Խըմբում յուսահատ ձայներ են լըսում:
 Երկխաները աղաղակում են,
 Կանայք լալիս են, և տրդամարդիկ
 Հաղիւ կարող են ըսփոփել... Այնտեղ
 Կանգնած է մի ծեր, որի մազերը
 Եւ ձիւնի նըման ճերմակ մօրուքը
 Անտանձ հողմերը ֆըրֆըռացնելով
 Ուղում են փետտել և փրցնել օդում,
 Կանգնած է այնտեղ և խըրօխտ ձայնով
 Յամառ պահանջում է վիճակ ձըգել...
 Ահա դալիս են...

(Գալիս է մի ծերունի երկայն և ճերմակ մազերով,
 նրա ետևից ուղևորների բաղմութիւն):

ԾԵՐ. Լըսիր, նաւապետ: Տեսնում ես ինքըդ,
 Երկնայինները թըշնամացել են:
 Կարող Զեւսը և Պոսէյդոնը
 Այնպէս խառնակել են բոլոր տարրեր,

Կարծես ուզում են, որ ամբողջ աշխարհ
 Տակ ու վրայ անեն, դարձընեն խօս:
 Անշուշտ կայ մեր մէջ մի անըարիշտ մարդ,
 Որ աստուածներին դայրացըրել է
 Յանցաւոր գործով կամ պիւշ ըբրանով:
 Մենք պիտի սըրբենք մեր նաւը մեղքից:
 Կը ձըգենք վիճակ: Ով հանեց, նըրան
 Մենք զոհ կը բերենք երկնայիններին՝
 Նըրանց ցասումը շիջեցընելու:

ՆԱԻ. Ես համաձայն եմ:

ԾԵՐ. Իսկ դուք, ճամբորդներ:

ԶԱՅՆԵՐ Համաձայն ենք մենք... վիճակ ձըգեցէք...

ԾԵՐ. Այո, կը ձըգենք...

ՆԱԻ. Բայց թոյլ տըւէք ինձ երկու խօսք ասել:
 Ճանապարհորդներ... բայց սըսս... լըսում էք,
 Ինչպէս է ծովըն այնտեղ մըրընշում:
 Մենք մօտենում ենք այն վըտանգաւոր,
 Ահեղ վիժուտքին, ուր ալիքները
 Զարնում են ջըրից ցըցւած ժայռերին
 Եւ կատաղարար գոռում ու հեծում,
 Ինչպէս արնաքամ վիրաւոր հըսկայ:
 Քանիցս անգամ նաւերըն այնտեղ
 Մըղւել զարնւել են սուր սուր վէմերին,
 Եւ ապա կըտոր կըտոր են կղել
 Թիեր ու կայմեր և ամբողջ նաւեր:
 Է՛յ, նաւաստիներ, այժմ դէպի ձախ
 Թիալարեցէք:
 Մեր ճանապարհից շեղւել ենք սակաւ:
 Դեռ շատ հեռու է նաւահանգիստը,

Դեռ շատ վիժուածքներ մենք պիտի անցնենք...
Արդէն տասներեք տարի է, որ ես
Երթեկեկում եմ այս ծովի վերայ.
Ձեզ պէս յարգելի ես շատ շատերին
Իմ հաւատարիմ այս սոկուն հաւով
Տարել հասցրել եմ մինչեւ ցամաք,
Եւ քանի՜ անգամ պատահել է ինձ
Մարտընչել անաստ մըրրիկներին դէմ.
Բայց դեռ չեմ յիշում, որ փոթորիկը
Այնքան անուշիկ դառնար ինձ համար,
Որքան այս գիշեր:
Համաձայն եմ ես այս պատկառելի
Աւերի հետ, որ Պօսէյդոնը
Ներհակած է խիստ մեղից մէկի դէմ:
Բայց եկէք խըմբով ջերմաջերմ աղօթք
Առաքենք բարի Ուրապեաններին.
Գուցէ աղօթքով մեզ հընար լինի
Հաշտեցնել մեզ հետ երկնայիններին:
Յաճախ աղօթքը շեջեցըրել է
Նըրանց զայրոյթը, և ալեկոծումն
Անվընաս անցել և հանդարտել է:
Մենք բոլորեքեան ջերմ, արտաւազին
Երկար աղօթում էինք, բայց իզուր.
Մեր արտասուքից այս ալիքները
Կարծես աւելի բարձրանում էին...
Ո՛չ, Պօսէյդոնը պահանջում է զոհ:
Դէհ, վիճակ, վիճակ:
ՉԱՅՆԵՐ. Այո, շուտ անենք... թէ չէ կորած ենք...
(Սկսում են հերթով վիճակ հանել: Վիճակը ընկ-

նում է հաւապեալին: Բոլորեքեան աղչում են):
ՉԱՅՆԵՐ. Բն, հաւապեալի՛ն...
ՆԱԽ. Այո, արդարեւ, ձեր հաւապեալին
Ընկաւ վիճակը:
Դու, երկրասասան և կարող Ձեհ,
Որ այդ բարձունքից անկդ գոռում ես
Մեղապարտ գըլխիս, դուք, Նօտ և Էօր,
Որ շառաչում էք կատաղի ծայրով,
Եւ դու, Պօսէյդոն, որ մըրընչիւնով
Այս լեռնանրման գոռ ալիքները
Գըլորում ես իմ այս հաւի վըրայ,
Շիջեցրէ՛ք անկ ձեր բարկութիւնը:
Եթէ պիղծ լեզւով կամ չար գործերով
Մեղանչել եմ ես ձեր դէմ, աստուածներ,
Ես իսկոյն և եթ կը քաւեմ մեղքըս:
Բայց միայն շուտով թող խաղաղանան
Այս կոհակները, լըռեն հողմերը,
Եւ երկընքիցը թող ցըրեն իսկոյն
Այս չարագուշակ, մըռայլ ամպերը:
Գընացէ՛ք բարով, ճանապարհորդներ:
Աստուածները տան, որ դուք յաջողակ,
Անվընաս հասնէք հաւահանդիստը:
Իսկ ես... կը մեռնեմ: Ձեր փըրկութիւնը
Կախած է միայն իմ մահից: Այո,
Այսպէս է կամքը երկնայիններին:
1-ն ՈՒՂԵԻՈՐ. Իսկ մեր հաւըն ո՞վ կը կառավարէ:
ՆԱԽԱՊԵՏ. Աստուածները ձեզ կը կառավարեն:
Բայց անա ձեզ և իմ օգնականը:
(Ցոյց տալով հաւաստիներից մէկի վըրայ)

Ծով նետւեամ թէ չէ, ըմբոստ տարրերը
 Կը հանդըստանան, կը պարզւի երկինք,
 Յոլուն աստղերը, ինչպէս լապտերներ,
 Յոյց կը տան ձեզ հարթ, անվրտանդ ուղին:
 (Դիագորին) Իմ մօր, իմ կընոջ, իմ դաւաններին
 Իմ վերջին բարով կը տանես ինձնից:
 Դէ, երթա՛ք բարով...
 (Կամենում է իրան նետել ծովը: Դիագորը
 խկոյն առաջը կանգնում պահում է նրան):
 ԴԻԱԳ. Ո՛չ, դու չես մեռնի, դու պիտի ապրես:
 Օ, դուք, թըշառներ, դուք, խելագարներ,
 Ինչո՞ւ այս դըժւար և ծանրը ժամին
 Կամենում էք դուք զոհել այն մարդուն,
 Որի վըրայ դուք պիտի դողայիք:
 Եթէ նա ինքըն իր յօժար կամքով
 Այս ծովը նետել իրան ցանկանար,
 Դուք նըրան ուժով պիտի պահէիք
 Եւ թախանձանքով խընդրէիք նըրան,
 Որ ձեզ չը թողնէ անտէրունչ, լըքեալ
 Այս դըժոխային յորձանքների մէջ:
 Դուք նըրան փըրկիչ պիտի համարէք
 Եւ ամուր բըռնէք նըրա թևերից
 Եւ ոչ թէ խեղճին խեղդամահ անէք:
 Ասացէք, ձեր մէջ ո՞վ է սըրանից
 Առաւել հըմուտ հաւաքարութեան
 Արեւստին կամ ո՞վ աւելի ճարպիկ.
 Ո՞ւմ են աւելի գերադանց յայտնի
 Մեր առջև բնկած խոչընդոտները—
 Ջըրապըտոյաներ, սոսկալի յորձանք,

Մըռնչոյ վիմուտ և կամ ձանձաղուտ,
 Խարուսիկ վայրեր:
 Դուք հաւատացիք ձեզած վիճակին,
 Բայց այդ վիճակը անխորհուրդ, անմիտ,
 Պատահական է: Ջըգեցէք նորից,
 Ուրիշին կ'ընկնի: Մեր հաւապեալին
 Ես ձանաչում եմ դեռ մանկութիւնից:
 Սըրա սըրտումը միշտ վառ է եղել
 Պատկառանք, երկինդ գէպի աստուածներ:
 Հազիւ թէ նաւը գալիս է մըանում
 Նաւահանգիստը, առաջին խօսքը,
 Որ դուքս է երևում սըրա բերանից,
 Շնորհակալական ջերմ աղօթքըն է
 Մեծ Պօսէյդոնին: Եւ ապա խկոյն
 Ըշտապ գընում է նըրա տաճարը
 Եւ մատուցանում գերընտիր զոհեր
 Ովկեանոսների հրամանատարին:
 Ո՛չ, Պօսէյդոնը չէր կարող երբէք
 Ջայրանալ բարի հաւապեալի դէմ:
 Ձեզ պէտք է մի մարդ, որ կըռիւ մըտած
 Բընութեան ըմբոստ այս տարրերի հետ,
 Յաղթանակ տանէր, որպէս քաջարի
 Ջինուրը մարտում: Ահա այդ մարդը:
 Ձեր փըրկութիւնը դուք որոնեցէք
 Սըրա կեանքի մէջ, իսկ սըրա մահից
 Եւ Պօսէյդոնից փըրկութիւն չը կայ:

1-ն ՈՒՂ. Ի՞նչպէս...

2-րդ ՈՒՂ. Ի՞նչ ասաց...

3-րդ ՈՒՂ. Որ Պօսէյդոնից փըրկութիւն չը կայ:

4-րդ ՈՒՂ. Սա անաստուած է: Սա այն սրբապիղծ
Դիագորասի աշակերտն է:
Ճանապարհորդներ, էլ հիմ եմք փրկարուած:
Ահա յանցաւոր այն անբարիշտը
Եւ մեր աղէտի միակ պատճառը:

5-րդ ՈՒՂ. Ծովը նետեցէք այդ անիրաւին:

1-ին ՈՒՂ. Բայց մեր վիճակը...

6-րդ ՈՒՂ. Այո, ում ընկաւ, թող նա էլ նետուի:

2-րդ ՈՒՂ. Թող երկուսն էլ զոհ գընան ծովին:

5-րդ Այո, երկուսին էլ ծովը ձրգենք:

ԾԵՐ. Դեռ ըստասեցէք: Դու ի՞նչ ասացիր,
Թէ Պօսէյդոնից փրկութիւն չը կայ:
Ինչպէս տեսնում եմ, դու նըրանցից ես,
Որոնք սոփեստէս են կոչում իրանց,
Որոնք պիղծ սըրտում սընուցանում են
Մօլի խորհուրդներ և մեր միամիտ
Պատանիներին աշխատում շեղել
Ճըշմարտութեան հարթ ճանապարհիցը:
Դուք, ժողովրդի գայթակղեցուցիչ
Նենգաւոր օձեր, թոյնի կաթիլներ.
Վարակիչ ժանտախտ Աթէնքի համար:
Անունըդ ասա: Ես գուշակում եմ,
Թէ ինչ դարձելի անուն կը լըսենք:

1-ին ՈՒՂ. Անունըդ ասա...

ԴԻԱԳ. Ուղեկիցներբոս...

2-րդ ՈՒՂ. Անունըդ ասա...

ԴԻԱԳ. Ճանապարհորդներ...

4-րդ ՈՒՂ. Անունըդ, անուն, անունըդ ասա...

ԴԻԱԳ. Դուք ի՞նչ էք անում արդեօք անունը:

Դիցուք կոչում են ինձ Կալլիմախոս...

ԾԵՐ. Ապա դու ուրեմն, նաւապետ, ասա

Սըրա անունը: Ձէ որ դուք իրար

Դեռ մանկութիւնից լաւ ճանաչում էք:

Թէ դու արդար ես, ուրեմն ինչո՞ւ

Այդպէս խընամբով ծածկում ես մեզնից:

ՆԱԻ. Թողէք, որ ասեմ: Սըրա անունը

Կալլիմախոս է: Այժմ դժէ էք դուք:

ԾԵՐ. Ժողովուրդ, միթէ դուք հաւատում էք:

Սըրանք սըտում են...

ՉԱՅՆԵՐ. Այո, սուտ են, սուտ...

ԾԵՐ. Այս երկուսին էլ ձրգեցէք ծովը.

Մեր նաւապետին վիճակի համար,

Սըրան սրբապիղծ չար լիզւի համար:

(Պոսեանը յարձակւում է Դիագորի վրայ. նա
ձեռքով ետ է տալիս):

ԴԻԱԳ. Բայց ըստասեցէք, աղաչում եմ ես:

Ինձ միջոց տուէք երկու խօսք ասեմ:

Ես խոստանում եմ յայտնել բոլորը,

Ինչ կամենում էք, և դեռ աւելի:

Բայց նաւապետի, յատուկ խընդրում եմ,

Մազին չը դիպչէք:

Միթէ այս կանանց ողբն ու կոծը

Եւ մանուկների հառաչանքները

Ձեն շարժում բընաւ ձեր կոշտ սըրտերը:

Եթէ խըղճում էք դուք ձեր հէգ կանանց

Եւ զաւակներին,

Եթէ ձեր կեանքը թանկ է ձեզ համար,

Կենդանի թողէք ձեր նաւապետին,

Որ միակ, միակ ձեր ազատիչը
Կարող է լինել այս դժգոհ ժամին:
Իսկ ես—թող կորչեմ, եթէ անպատճառ
Տըգիտութիւնը պահանջում է զոհ:
Դիտցէք ուրեմն, ճանապարհորդներ,
Ձեր առջև կանգնած այժմ խօսում է
Նա, որի կեանքը գընահատւած է
Մեր Աթէնքումը մի տաղանդ ոսկով:

ՁԱՅՆԵՐ. Դիագորասը... խեղդէնք... պատանհէնք...

ԴԻԱՄ. Դարձեալ մի բոլէ, ազաւում եմ ես,
Եւ աշնուհետե կըրկին ձերն եմ:
Ես նա եմ, որ իր մատաղ հասակում
Հաւատում էր ջերմ, ինչպէս այժմ գութ,
Դիցարանական առասպելներին:
Բայց երբ զօրացայ հոգով ու մըտքով,
Մարդկային կեանքի ճակատամարտում
Տեսայ հրէշաւոր անարգարութիւն,
Ճընշւած և հեծող առաքինութիւն,
Անպատիժ յանցանք և լրկտի գործեր,
Բայց Պօսէյդոնի և մեծ Զեւսի
Ներկայութիւնը չը տեսայ կեանքում:—
Եւ աշնուհետե
Հրապարակներում և փողոցներում
Ես ըսկըսեցի քարոզել մարդկանց
Սընապաշտութեան, արդիտութեան դէմ,
Միակ ցանկութիւն փարելով իմ մէջ,
Որ այսուհետե մարդիկ բարձրանան
Անցեալ խաւարի, մոլութեան վըրայ
Եւ, ինչպէս արծիւ երկնակամարում,

Նայեն աշխարհի, բընութեան վըրայ:
Բայց ուղիղ աշնպէս,
Ինչպէս մըրբիկն ու փոթորիկը,
Վեր կացաւ իմ դէմ Յունական ազգը
Եւ իմ քարոզը կոչելով մոլի
Սըրբապըղծութիւն, իմ գըլխի համար
Մի տաղանդ ոսկի գին նըշանակեց:
Ես որոշեցի փախչել անարդար
Հալածանքներից:
Բայց ազատելով խուժանի ձեռքից
Ցամաքի վըրայ, ահա այս ծովում
Ես հանգիպեցի աւելի երս
Անողորելի, կոպիտ զօրութեան:
Եւ այդ բիրտ ոյժը—ձեր պահանջըն է,
Որ այս խաւարից հազարապատիկ
Աւելի մութ է, հազարապատիկ
Աւելի վայրագ, քան այս հոգմերը
Եւ փըրփըրողէզ այս ալիքները:
Ես Դիագորըն եմ Մէլոսացին.
Թող Յունաստանը խօսէ իմ մասին,
Թէ այն անբարիշտ և ըմբոստ ոգին
Չը գըտաւ հանգիստ երկընքի տակը,
Մըշտընջենաւոր նա հանգիստ ընտրեց
Ծովի յատակը:

(Նետում է ծովը: Նրան հետեւում է հաւապետը:
Ալեկոնումը սաստկանում է, և հաւը զարնելով վի-
մուտքին՝ խորտակում: Բոլոր մարդիկ ազդու-
շերով և սղաղակներով թափում են ծովը):



Առաջին շողեր	52
Յոյս	5
Ցանկալի հրդ	6
Անիի աւերակներէ վրայ	7
Բնութեան գրկում	8
Սերունդներ	10
Սիրավէպ	11
Միւրաժ	12
Սնապատում	13
Արեւելք և Արեւմուտք	14
Հօր անէծքը	16
Այսօր էգուց	17
Աղքատը և ամենաբարի կինը	19
Սասուն	20
Լեռնային վտակ	22
Աշուն	24
Անվերջ գիշեր	26
Անդրիագործը	27
Եղևին	28
Նոր Սողոմ	31
Իմ զաւակին	32
Թախիծ	34
Գողթան երգիչներին	36
Ողջոյն մուսայիս	38
Մուսան և պոյէտը	39
Ծով	40

Այժմ ի՞նչ անենք	41
Գեղեցկապաշտ բարեկամիս	42
Իմ թշնամիներին	43
Սևան	44
Իբրեկոսի կռուները	49
Լուղորդ	57
Պոլիկրատի մատանին	64
Երաշխիք	69
Հեկտորի հրաժեշտը	75
Յոյս	77
Երկրի բաժանումը	78
Լօրեկէյ } Հայնէի	80
Սոճի }	81
Նեգրի երազը, Լօնգֆելլօի	82
Մինյօն, Գէօթէի	83
Մարգարէ, Պուշկինի	85
Գոդիււա, Տեննիսոնի	87
Փոթորիկ	92

Վ Ի Ի Պ Ը Կ Ն Ե Ի

Էջ	Տ ո ղ	Ս խ ա լ	Ու ղ ի ղ
10	5 ներքեից	երգել	երգել
14	8 վերեից	բեռը	բեռը
14	1 ներքեից	կըրտինք	քըրտինք
22	10 »	կոց	կոճ
34	9 վերեից	ժպում	ժպտում
38	3 »	Գողթան	Գողթան
39	6 »	զսղթան	Գողթան
41	9 »	մընաց.	մընաց,
62	9 վերեից	մարդկային իմ սիրով	իմ սիրով մարդկային
74	8 ներքեից	ճապճեպով	հապճեպով
75	6 »	Առուածնների	Առուածների
78	9 »	թունգ	թունդ
89	3 վերեից	տներով	տներում
95	1 »	զարմանար	զարմանար
95	8 ներքեից	զխտեո	զխտեա

INDEX

Page	Subject	Page	Subject
10	Algebra	10	Algebra
11	Geometry	11	Geometry
12	Trigonometry	12	Trigonometry
13	Calculus	13	Calculus
14	Statistics	14	Statistics
15	Probability	15	Probability
16	Logic	16	Logic
17	Philosophy	17	Philosophy
18	History	18	History
19	Geography	19	Geography
20	Science	20	Science
21	Art	21	Art
22	Music	22	Music
23	Literature	23	Literature
24	Language	24	Language
25	Mathematics	25	Mathematics
26	Physics	26	Physics
27	Chemistry	27	Chemistry
28	Biology	28	Biology
29	Medicine	29	Medicine
30	Law	30	Law
31	Politics	31	Politics
32	Economics	32	Economics
33	Social Science	33	Social Science
34	Psychology	34	Psychology
35	Education	35	Education
36	Religion	36	Religion
37	Morals	37	Morals
38	Customs	38	Customs
39	Traditions	39	Traditions
40	Superstitions	40	Superstitions
41	Myths	41	Myths
42	Fables	42	Fables
43	Legends	43	Legends
44	Stories	44	Stories
45	Plays	45	Plays
46	Poems	46	Poems
47	Songs	47	Songs
48	Dances	48	Dances
49	Games	49	Games
50	Sports	50	Sports
51	Recreation	51	Recreation
52	Amusements	52	Amusements
53	Pastimes	53	Pastimes
54	Leisure	54	Leisure
55	Entertainment	55	Entertainment
56	Amusement	56	Amusement
57	Pleasure	57	Pleasure
58	Enjoyment	58	Enjoyment
59	Delight	59	Delight
60	Fun	60	Fun
61	Recreation	61	Recreation
62	Amusement	62	Amusement
63	Pleasure	63	Pleasure
64	Enjoyment	64	Enjoyment
65	Delight	65	Delight
66	Fun	66	Fun
67	Recreation	67	Recreation
68	Amusement	68	Amusement
69	Pleasure	69	Pleasure
70	Enjoyment	70	Enjoyment
71	Delight	71	Delight
72	Fun	72	Fun
73	Recreation	73	Recreation
74	Amusement	74	Amusement
75	Pleasure	75	Pleasure
76	Enjoyment	76	Enjoyment
77	Delight	77	Delight
78	Fun	78	Fun
79	Recreation	79	Recreation
80	Amusement	80	Amusement
81	Pleasure	81	Pleasure
82	Enjoyment	82	Enjoyment
83	Delight	83	Delight
84	Fun	84	Fun
85	Recreation	85	Recreation
86	Amusement	86	Amusement
87	Pleasure	87	Pleasure
88	Enjoyment	88	Enjoyment
89	Delight	89	Delight
90	Fun	90	Fun
91	Recreation	91	Recreation
92	Amusement	92	Amusement
93	Pleasure	93	Pleasure
94	Enjoyment	94	Enjoyment
95	Delight	95	Delight
96	Fun	96	Fun
97	Recreation	97	Recreation
98	Amusement	98	Amusement
99	Pleasure	99	Pleasure
100	Enjoyment	100	Enjoyment

ՀՀ Ազգային գրադարան



NL0358092

41934.